Azg Ազգ

9 ՅՈՒՆԻՍ 2004 ՇԱԲԱԹ 105 (3027)

Թուրքիան Իսրայելից հեռ է կանչել իր դեսպանին

ԹԵԼ ԱՎԻՎ 8 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թուրքիան Իսրայելից հեռ է կանչել իր դեսպանին «կոնսուլցացիաներ անցկացնելու համար»՝ ի նշան բողոքի Հոտայում, Սամարիայում եւ Գազայի հատվածում իսրայելական բանակի գործողությունների դեմ: Իսրայելական լրատվամիջոցների տվյալներով երկրից հեռացել է ինչպես դեսպանը, այնպես էլ Թուրքիայի գլխավոր հյուպատոսը: Կանխավ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը իսրայելցիների գործողությունները համեմատել էր իսպանացիների գործողություններին, որոնք 15-րդ դարում հալածում էին հրեաներին, որով եւ հարուցել էր իսրայելական կողմի բողոքը: Երկու երկրների միջեւ առանց այդ էլ լարված հարաբերությունները չբարդացնելու համար Թուրքիան փորձում էր թաքուն պահել դիվանագետներին հեռ կանչելը հաղորդում է Mignews-ը: Միեւնույն ժամանակ թուրքական պաշտոնական աղբյուրները պնդում են, որ Անկարայի եւ Երուսաղեմի հարաբերություններում որեւէ ճգնաժամ չկա: Հաղորդվում է, որ «կոնսուլցացիաների» նպատակը փոխըմբռնման ամրապնդումն է: Սակայն Իսրայելում թերահավատորեն են ընդունում այդ հայտարարությունները: Թուրքական ԱԳՆ-ն պնդում է, որ դեսպանը եւ հյուպատոսը այս շաբաթ կվերադառնան Իսրայել:

Եվրոմիությունը ատոմակայանի փակման կոնկրետ ժամկետ չի նշում

Բրյուսելից վերադարձավով հայտնեց Կարեն Ճշմարիտյանը

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բելգիայի մայրաքաղաքում տեղի է ունեցել Հայաստանի եւ Եվրոմիության միջեւ կնքված գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի շրջանակներում ստեղծված Հայաստան-ԵՄ համագործակցության կոմիտեի 5-րդ նիստը: Հայկական պատվիրակությունը գլխավորած առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարը երեկ հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ թվարկեց հարցերի այն շրջանակը, որ քննարկվել է նիստի ժամանակ:

Անկասկած, գլխավոր հարցը եղել է հայկական ատոմակայանի փակման Եվմիության պահանջը: Ինչպես հայտնի է, վերջինս այդ նպատակով պատրաստակամություն էր հայտնել տրամադրել 100 մլն եվրո, որը հայկական կողմի կարծիքով, մոտ 10 անգամ պակաս է այդ նպատակով եւ դրան հաջորդող գործողությունների համար պահանջվող գումարից: Բրյուսելյան հանդիպման ժամանակ, ինչպես նշեց Կարեն Ճշմարիտյանը, ընդգծվել է, որ ԱԷԿ-ի փակումը միայն հզորությունների փոխարինմամբ չի պայմանավորված: Պետք է ճշտվեն դրա համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները, չափը, հետագա խլյերի հաջորդականությունը եւ այլն: Հարցը հանգամանալից ներկայացրել է Էներգետիկայի փոխնախարար Արեգ Գալստյանը: Վերոնշյալ խնդիրները հստակեցնելու նպատակով ստեղծվել է համատեղ աշխատանքային խումբ:

Տես էջ 3

Ղարաբաղյան հակամարտությունը Ալիեւի միակ հիմնախնդիրն է

ՄԻՆՍԵՅԱՆՈՒՐ, 8 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մոտակա տարիներին Ադրբեջանում գաղթականների ոչ մի վրանաճամբար չի մնա: Այդ մասին նախագահ Իլհամ Ալիեւը հայտարարել է Մինգեչաուրում հարկադիր վերաբնակների համար նոր ավանի բացման արարողությանը: 412 ընտանիքների համար այդ ավանը կառուցվել է Ճապոնիայի 2,5 մլն դոլարի դրամաշնորհով՝ «Հայացք աշխարհին» /ԱՄՆ/ միջազգային բարեգործական կազմակերպության աջակցությամբ:

Նախագահը խոսացել է, որ երկրի էկոնոմիկայի ամրապնդման համեմատ գաղթականներին ցույց տրվող օգնության ծավալները կմեծանան: «Սակայն դա բնավ էլ չի նշանակում, որ նրանք միշտ ապրելու են գաղթականների ավաններում», ասել է Իլհամ Ալիեւը եւ ավելացրել. «Հենց որ ազատագրվեն մեր հողերը, դուք կվերադառնաք Ղարաբաղ»: Ալիեւը հատկապես նշել է, որ ղարաբաղյան հակամարտությունը մնում է Ադրբեջանի միակ հիմնախնդիրը: «Մնացած հիմնախնդիրները կամ լուծված են, կամ լուծվում են», ասել է նա:

«Երկրի էկոնոմիկան ամրապնդվում է, գործազրկությունը կրճատվում է», նշել է Ալիեւը, ընդգծելով, որ Ադրբեջանում իր նախագահության յոթ ամսվա ընթացքում բացվել են 30 հազար նոր աշխատատեղեր:

Իլհամ Ալիեւն այն կարծիքին է, որ ղարաբաղյան հակամարտությունը կարող է լուծվել միայն միջազգային իրավունքի հիման վրա: Նրա խոսքով, դա նշանակում է, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը պետք է վերականգնվի: «Ադրբեջանը երբեք չի հաշտվի իր հողերի կորստի հետ եւ երբեք փոխզիջման չի գնա այդ հարցում», հայտարարել է պետության ղեկավարը: «Խաղաղ բանակցությունների ներուժը տակավին սպառված չէ, եւ դրանք կշարունակվեն», ասել է նա: «Սակայն ցանկացած պահի մենք պարտավոր ենք պատրաստ լինել ցանկացած այլ ճանապարհներով, ամեն գնով ղարաբաղյան հիմնախնդիրը լուծել Ադրբեջանի օգտին», հայտարարել է նախագահ Ալիեւը:

Ղարաբաղի հարցը Կոնգրեսում քննարկման դնելու մտադրություն

ԲՍՔՈՒ 8 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ամերիկա-թուրքական ընկերակցությունների վեհաժողովը (ԱԹԸՎ) մտադիր է ընթացիկ տարվա աշնանը ԱՄՆ-ի Կոնգրեսի քննարկմանը ներկայացնել ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցը: Այս մասին հունիսի 7-ին Բաքվում հայտնել է ԱԹԸՎ նախագահ Արջումանդ Գըլընջը: Արտասահմանյան երկրներում ապրող ադրբեջանցիների հետ աշխատանքի պետական կոմիտեի ղեկավարության հետ հանդիպումից հետո նա հայտնել է, որ ղարաբաղյան հարցը քննարկման կմտցվի ԱՄՆ Կոնգրեսի ամերիկա-թուրքական բարեկամության խմբի հետ համատեղ: Ա. Գըլընջը նշել է ղարաբաղյան գործընթացի մասին ԱԹԸՎ-ի իրազեկության եւ անկախ իրենց բնակության վայրից թյուրքական աշխարհի ներկայացուցիչներին աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտության մասին: Բաքվի «525» թերթի համաձայն, ԱԹԸՎ-ն ամենախոշոր թուրքական համայնքային կազմակերպությունն է Ամերիկայում եւ ողջ աշխարհում: Կազմակերպությունը, որ հիմնադրվել է 1970 թվականի վերջին, ներկայումս 57 բաժանմունք ունի ԱՄՆ-ում եւ Կանադայում:

Ջիգարխանյանը որոշել է չխաղալ բեմում

Արմեն Ջիգարխանյանը որոշել է չխաղալ բեմում: Պատճառը դերասանի առողջական խնդիրներն են: Այս լուրը երեկ ինտերնետային ցանցում ներկայացված էր հետեւյալ կերպ. «Ծանր հիվանդությունը մեզանից խլեց մեծ դերասանին»: «Ֆեդերալ պոստ» կայքում այս նախադասությունն ընթերցողն անհանգստությամբ ու մեծ ափսոսանքով ցանցի հաջորդ պահանջը կատարելուց հետո հնարավորություն ստացավ կարդալու՝ «Մոսկվան կորցրեց մեծ արտիստին»: Եվ նման անհանգստություն ու ափսոսանք առաջացնող լուրին ծանոթանալուց հետո միայն համբերությամբ զինվածները կայքից կայք 10 որոշից ավել տեղ դեգերումներից հետո կարողացան պարզել բուն տեղեկությունը: Իհարկե, այս փաստով չես զարմացնի, քանի որ եզակի չէ: Սակայն պակաս ափսոսանք չի առաջացնում նաեւ այն, որ նման էժանագին միջոցներով սեփական հեղինակությունը մի կարճ ընթացք բարձրացնելու համար մարդիկ անցնում են մարդկայնության վրայով եւ անունը դնում պրոֆեսիոնալիզմ:

Հոչակավոր դերասանը ողնաշարի հիվանդության պատճառով չի կարողանում տեւականորեն գտնվել բեմում, եւ ի վերջո հիվանդության տառապանքները ստիպել են ընդունել բեմից հեռանալու որոշում: Հուրախություն Ջիգարխանյանի երկրպագուների, արտիստն, այնուամենայնիվ, կշարունակի նկարահանվել կինոյում եւ ներկայումս ընտրում է համապատասխան սցենար:

Քադիրովի որդին վերջնագիր է ներկայացրել մոջահեդներին

ԳՐՈԶՆԻ 8 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Չեչնիայի զոհված նախագահի որդի Ռամզան Քադիրովը վերջնագիր է ներկայացրել չեչեն մոջահեդներին, հաղորդում է Liberty Live-ը: Հայտարարության մեջ, որ հաղորդվել է տեղի հեռուստատեսությամբ, Քադիրովը գրոհայիններին կոչ է արել երեք օրվա ընթացքում վայր դնել զենքը եւ հանձնվել նախագգուշացնելով, որ հակառակ դեպքում նրանք կոչնչացվեն:

Վիլայաթ Գուլիեւը դեսպան է նշանակվել Լեհաստանում

ԲԱՔՈՒ 8 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Երկուշաբթի Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հրամանագրով՝ Վիլայաթ Գուլիեւը Ադրբեջանի արտակարգ եւ լիազոր դեսպան է նշանակվել Լեհաստանում: Բաքվի «525» թերթը հիշեցնում է, որ բանասիրական գիտությունների դոկտոր Վ. Գուլիեւը 1999 թ. հոկտեմբերից մինչեւ 2004 թ. ապրիլ զբաղեցնում էր Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի պաշտոնը:

Ադրբեջանցի խմբագիրը ինքնահրկիզվելու է

ԹԲԻԼԻՍԻ 8 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Վրաստանի ադրբեջանական «Ենի դյուրունջե» թերթի գլխավոր խմբագիր Նիյազի Հուսեյնովը հայտարարում է, որ ի նշան բողոքի, վրացական նոր իշխանությունների կողմից ադրբեջանցիների ճնշումների դեմ՝ ինքնահրկիզման ակտ կկատարի Ադրբեջանում Վրաստանի դեսպանատան դիմաց: Այն բանից հետո, երբ վերջերս Բաքվում մամլո ասուլիս է անցկացրել նրա եղբայրը, ձերբակալվել է մայրը, ստրեսներից կուրացել է, իսկ անձամբ իրեն ցանկացել են ձերբակալել, հարուցելով ինչպես եւ եղբոր նկատմամբ քրեական գործ «հօգուտ ադրբեջանցի անջատողականների լրտեսության» եւ «խարդախության համար»:

ՀԱՅՅ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ

Կրկին ներսի դեմ

«Ա1+» հեռուստաընկերության գանգատի համաձայն, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշում է ընդունել «Ա1+»-ի հայցով պալատ ձեւավորել եւ 7 դատավորից կազմված պալատի վարույթում քննել գանգատն ընդունելու հարցը: Այս մասին երեկ լրագրողներին տեղեկացրին «Ա1+» հեռուստաընկերության տնօրեն Մեսրոպ Մովսիսյանը եւ Փաստաբանների միջազգային միության նախագահ Տիգրան Տեր-Եսայանը:

Եվրոդատարանն իր որոշման մասին տեղեկացրել է նաեւ ՀՀ կառավարությանը, ուղարկել 4 հարց, թե ինչու է հարկավոր հարցը չքննել: Կառավարությունը հարցերին կարող է պատասխանել մինչեւ սեպտեմբերի 20-ը: «Մելտեխ» ՍՊԸ-ն բողոքը ներկայացրել է 2 տարի առաջ: Ըստ ղեկավարության գործընթացը բավական արագ է տեղի ունեցել: Երկու տարիների ընթացքում նրանք Հայաստանում տեղի ունեցող դեպքերի մասին տեղեկացրել են Եվրոպական դատարանին:

Այժմ, փաստորեն, գործը կոմիտեպալատ-մեծ պալատ եռաստիճան համակարգի երկրորդ փուլում է: Լինում են դեպքեր, երբ կողմերը բողոքարկում են կոմիտեի որոշումը, եւ պալատը փոխում է այն, սակայն մեծ պալատի որոշումն անբեկանելի է:

Տես էջ 2

ԸՆԹԱՑԻԿ

Կոալիցիան եւ բյուջեի կատարողականը

«Կոալիցիան իբրեւ փաստ կայացել է», կարծում է ՀՀ վարչապետը

Երեկ Ազգային ժողովում ողջ օրվա ընթացքում շարունակվում էին «ՀՀ 2003 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկումները: Անցած տարվա համեմատ այս տարվա բյուջեի կատարողականը ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանն ընդհանուր առմամբ դրական է գնահատում: Առաջընթաց չի արձանագրվել միայն շինարարական աշխատանքների կտրվածքով, որոնք անցած տարի «Լինսի» հիմնադրամի շնորհիվ բավական աշխուժացել էին: Վարչապետը, սակայն, հավաստիացրեց, որ հենց հունիսից շինարարությունը կրկին լայն թափ կստանա: Գրեթե բոլոր ասպարեզներում բյուջեի կատարման ցուցանիշները կազմել են 100 եւ ավելի տոկոս, բացառությամբ կրթության, գիտության եւ մշակույթի ոլորտների: Սակայն վարչապետը դա «Օրինաց երկրի» թերացում չի համարում: Դա կառավարական գործունեության մեջ էական դեր չի խաղացել: Եվ նույնիսկ այդ թերացման համար կառավարությունն է պատասխանատու:

Վարչապետը գոհ է կոալիցիայի անդամ նախարարների գործունեությունից, որոնց կուսակցականությունը չի խանգարում մեկ թիմ լինելու, եւ որոնք հստակ կատարում են կառավարական առաջադրանքները: Դա նշանակում է, որ կոալիցիան, իբրեւ իրողություն կայացել է, դրա ստեղծումն իր արդյունքները տվել է:

Լուծվում են նաեւ Ազգային ժողովի հետ կապված հիմնական խնդիրները: Որոշ նախագծերի հետ կապված տարակարծությունները չեն խանգարում համերաշխ աշխատանքին: «Եթե համեմատենք անցած տարվա առաջին ամիսներն այս տարվա հետ, նկատելի է, որ կառավարության եւ ԱԺ-ի միջեւ առաջացած տեխնիկական դժվարությունները հիմնականում վերացվել են»: Մի խոսքով, այդ համերաշխությանը նաեւ նպաստեց, որ, ըստ վարչապետի, ընդդիմությունը չհասավ խորհրդարանը բոյկոտելու իր նպատակին, բայց «երկխոսության փորձեր եղել են ու կշարունակվեն միայն այն դեպքում, եթե ընդդիմությունը հրաժարվի իր ներկայացրած նախապայմաններից՝ վստահության հանրաքվե, նախագահի հրաժարական: Մենք կարող ենք երկխոսել միայն այդ նախապայմաններից առաջացած հետեւանքների մասին: Կոալիցիայի անդամ կուսակցությունները սկզբունքորեն դեմ են եւ չեն ցանկանում այդ թեմաների շուրջ երկխոսել ընդդիմության հետ»:

«Արդյոք ընտրությունների եւ ընդդիմության հետ երկխոսության տապալման պատճառով չե՞ն թուլացել իշխանությունների դիրքերը միջազգային ասպարեզում» հարցին Ա. Մարգարյանը պատասխանեց. «Կարելի է ասել, չեն ուժեղացել, որովհետեւ մենք փորձեցինք մեր ներքին կյանքին խառնել կառույցների, որոնք նորմալ իրավիճակում նման իրավունք չէին ունենա: Եթե մենք կարողանայինք նորմալ քաղաքական երկխոսություն ծավալել ընդդիմության հետ, ապա կարելի կլիներ նման խնդիրները մեր պետության դեմ չթառայեցնել»: Այնուամենայնիվ, ընդդիմության աչքով նայելով բյուջեի կատարողականին, վարչապետը համոզված է, որ հնարավոր էր ավելի փոքր ծախսեր անել, քան եղել է: Ամեն տարի պետական գնումների ծավալները մեծանում են, եւ դրանք ընդլայնելու տեղ էլի կա: Այժմ ֆինանսների նախարարությունն ու միջազգային ֆինանսական կազմակերպությունները քննարկում են «Գնումների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու հարցը: Եվ գուցե թե օրենքի փոփոխությունը պետական խնայողությունների ավելի մեծ հնարավորություններ կտա, այսինքն՝ ծախսերի վրա հսկողությունն ավելի մեծ կլինի:

Լրագրողների հետ ճեպազրույցում Անդրանիկ Մարգարյանն անդրադարձավ ներքաղաքական կյանքի մի քանի հիմնախնդիրների եւս: Նա տեղեկացրեց, որ նորաստեղծ հակակոռուպցիոն նոր մարմնին կից ստեղծվել է նաեւ մոնիտորինգային խումբ, որը վերահսկողական յուրահատուկ ֆունկցիա կկատարի՝ աջակցելով կառավարության՝ նույնպես հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրին:

Չնայած ընդդիմության հանրահավաքների ընթացքում կատարված ձերբակալություններին, կառավարության ղեկավարը կարծում է, որ անցած մեկ տարվա ընթացքում Հայաստանն ավելի ժողովրդավար է դարձել, քանի որ «լինում են չարտոնված երթեր, միտինգներ, իսկ թերթերն էլ ազատ գրում են»: Իսկ «Արդարության» դեմ հարուցված քրեական գործերը դատախազության խնդիրն են: Վարչապետն, այնուամենայնիվ, հիշեցրեց, որ ինքը դատարան է ընդդիմության գրասենյակներում առանց սանկցիաների կատարված խուզարկությունները եւ խոստացավ, որ նման դեպքեր չեն կրկնվի:

ԳԱԲԻԼՆ ՂԱՆԻԵԼՅԱՆ

ԱԺ հայտարարությունների ժամին

Ինչու ձախողվեց «վարդերի հեղափոխությունը» ըստ Հմայակ Հովհաննիսյանի

ԱԺ հայտարարությունների ժամին Հմայակ Հովհաննիսյանը մեջբերեց Միգրացիայի եւ փախստականների գործերով վարչության հրապարակած տվյալները, թե 2004 թվականի առաջին 3 ամիսների ընթացքում Հայաստանից մեկնածների թիվը 25 հզ. 455 մարդով գերազանցել է նույն ժամանակում Հայաստան ժամանածների քանակին: Անցած տարվա նույն ժամանակաընթացքում Հայաստանից մեկնածների թիվը եղել է 114 հզ. 519 մարդ, ժամանածներինը՝ 101 հզ. 802: Համեմատական վերլուծությունը պատգամավորին հանգեցրել է իրեն բնորոշ ոչ սովորական եզրահանգման. «Հաշվի առնելով, որ ընդդիմության առաջնորդները հենց 2004 թ. հունվարմարտ ամիսներին էին նախագահափոխության խոստումներ շռայլում, կարելի է եզրակացնել, որ հազարավոր քաղաքացիներ կամ չեն հավատացել նախագահափոխության հնարավորությանը, կամ էլ առհասարակ որեւէ հույսեր չեն կապում դրա հետ: Ահա սա, այլ ոչ թե վարչակազմի թվացյալ հզորությունն է պատճառը, թե ինչու մեզանում ձախողվեց «վարդերի հեղափոխությունը»: Մի խոսքով, ըստ պատգամավորի հայտարարության, ընդդիմությունն իր նախագահափոխական ծրագրերով նպաստել է արտագաղթի մեծացմանը:

Բյուջեի կատարողականներին հակառակ

Հենց նոր բյուջեի կատարողականների հաշվետվությունները հորով-մորով առած խորհրդարանին Վիկտոր Դալլաքյանը հակադրեց ընդդիմադիրների մեկնաբանությունը սոցիալական «կատարողականների» մասին: Համաշխարհային բանկի տվյալներով, Հայաստանը դասվել է աշխարհի ամենաաղքատ 49 երկրների շարքում, ժողովրդի 80 տոկոսն աղքատ է, բնակչության 40 տոկոսը թերսնվում է: Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով բնակչության 1,5 միլիոնանոց հաշվեթի սննդի 70 տոկոսից ավելին կազմում են հացն ու կարտոֆիլը:

1998 թվականի համեմատ 2 անգամ աճել է տուբերկուլյոզով հիվանդների, 1,4 անգամ շաքարախտով, 1,2 անգամ սիրտ-անոթային եւ օնկոլոգիական հիվանդությունների թիվը: 1990 թվականի համեմատ բնակչության 1000 մարդուն ընկնող բնական աճը կրճատվել է 8 անգամ, իսկ ծնելիության եւ պտղաբերության ցուցանիշը՝ 2 անգամ:

Մասնակի ադամրեականացում

Խորհրդարանը երեկ երկրորդ ընթերցմամբ քննարկեց քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու օրենքի նախագիծը: Բարեփոխված նախագծում միաժամանակ եւ ադամրեականացումներ, եւ խստացումներ են կատարվել: Վիրավորանքի եւ զրպարտության հոդվածներում պահպանվել է 1 տարի ազատազրկմամբ պատիժը, եթե նույն արարքը անձը կատարել է կրկին: Սակայն նույնիսկ այս դեպքում օրենքը հնարավոր է համարում նաեւ տուգանքի միջոցով մեղքի քավումը: Վիրավորանքի հոդվածի համաձայն՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկից 800-ապատիկի չափով, զրպարտության հոդվածի համաձայն՝ նվազագույն աշխատավարձի 300-ապատիկից 1000-ապատիկի չափով:

Հայտնի է, որ Եվրոխորհուրդը պահանջում էր ադամրեականացնել այս հոդվածները, եւ ինչպես տեղեկացրեց արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը, մասնակի այս ադամրեականացումը Եվրոխորհրդի առաջարկած այլընտրանքային տարբերակներից է:

Դ. Գ.

ԼՐԱԳՐՈՂԻ ՀԻՇՈՏԱԿԻՆ

Բացվեց Տիգրան Նաղդալյանի հուշատախտակը

ԵՐԵՎԱՆ, 8 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Տիգրան Նաղդալյանի լուսավոր հիշատակը հավերժացնող հուշատախտակի վրա գրված է ընդամենը 2-3 տող ու չի գրված այն ամենը, ինչ կարող էր լինել: Վստահ եմ, որ դա էլ կլինի, կգա ժամանակ, երբ գնահատվի ու ներկայացվի Հայաստանում ազատ խոսքի, ազատ լրագրության զարգացման պատմությունը, Տիգրանի անունը կլինի առաջին էջերում, քանի որ նրա նման մարդիկ ծնվում են մեկ անգամ ու մնում ընդմիշտ», ասաց ԱԺ փոխնախագահ Վահան Հովհաննիսյանը՝ այսօր ականավոր լրագրողի, Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության առաջին նախագահ Տ. Նաղդալյանի ծննդյան 38-ամյակի կապակցությամբ Զատյան 8 հասցեով բնակելի տան պատին հուշատախտակի բացման արարողությանը:

«Տիգրան Նաղդալյանն ընդամենը 36 տարեկան էր, լի համոզմունքներով եւ իր խոսքը տեղ հասցնելու, ծրագրերն իրագործելու վճռական մտադրությամբ, որոնցից մի քանիսը հասցրեց կյանքի կոչել», ասաց Երեւանի քաղաքապետ Երվանդ Զախարյանը:

Հանրային հեռուստառադիո ընկերության նախագահ Ալեքսան Հարությունյանը նշեց, որ հուշատախտակը ոչ միայն տուրք է ականավոր լրագրողի հիշատակին, այլեւ հիշեցնում բոլորին, փոխարինված 1966-2002 տարեթվերը պետք է վկայեն Տիգրանի երիտասարդ կյանքի ընդհատվելը եւ դրա պատճառները: Նա նաեւ տեղեկացրեց, որ եթե ոչ այս տարի, ապա հաջորդ տարեսկզբից կգործի Տ. Նաղդալյանի անվան հեռուստատեսության եւ ռադիոյի ակադեմիա, իսկ մասնավոր հեռուսաընկերություններից մեկը սահմանում է նրա անվան մրցանակ:

Վլադիմիր Պետրոսյանի հեղինակած հուշակոթողը բացեցին Տիգրան Նաղդալյանի հայրը եւ ընկերը՝ Հայաստանի հանրային հեռուստառադիո ընկերության նախագահ Ալեքսան Հարությունյանը:

Ավտովթարի ենթարկված Իշխան Նազարյանի առողջական վիճակը ծանր է, Արմեն Խաչատուրյանի վիճակը՝ նորմալ

ԵՐԵՎԱՆ 8 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հունիսի 6-ին Աբեղյանի ավտոմայրուղում ավտովթարի են ենթարկվել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արմեն Խաչատուրյանը եւ ՀՀ Արդարադատության խորհրդի քարտուղար Իշխան Նազարյանը: Նրանք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Արմենիա» բժշկական կենտրոն:

Իշխան Նազարյանը գտնվում է վերակենդանացման բաժնում: Նա ենթարկվել է վիրահատության. հեռացվել է փայծաղը, կարվել է ենթաստամոքսային գլխիկի պատռվածքը: Ինչպես հայտնեցին «Արմենիա» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժնից, Ի. Նազարյանի գիտակցությունը վերականգնվել է, սակայն հիվանդի վիճակը դեռեւս մնում է ծանր, միացված է արհեստական շնչառության սարք:

Արմեն Խաչատուրյանը գտնվում է նյարդավիրաբուժության բաժնում:

Ըստ բուժող բժիշկ Նահապետյանի, բուժումը ընթացքի մեջ է, Խաչատուրյանի առողջական վիճակը նորմալ է:

Հավելյալ տեղեկություններ ստանալու մեր փորձերը ձախողվեցին, քանի որ նյարդավիրաբուժության բաժնի վարիչը հրաժարվեց հեռախոսով որեւէ տեղեկություն տրամադրել:

Կրկին ներսի դեմ

Սկիզբը էջ 1

«Եթե կան կառավարության կողմից լուրջ հարցադրումներ, թող տան, մենք էլ նայենք, միգուցե խելամիտ մտքեր են, մենք ենք սխալ», ասաց «Ա1+» հեռուստաընկերության շահերը պաշտպանող Տիգրան Տեր-Եսայանը: Նա նշեց, որ եթե պետությունը որեւէ պատասխան չտա, պալատն իր գործը կշարունակի: Կոնկրետ գործով ձեւավորված պալատի կազմը դիմող կողմին հայտնի չէ:

Տիգրան Տեր-Եսայանն ասաց, որ ընդհանրապես Եվրոպական դատարանը շահագրգռված է խնդիրը հաստատությամբ լուծելու, ինչի նախադեպեր եղել են: «Հաշտության մեջ շատ կետեր կան, որ գաղտնի են պահվում կողմերի պահանջով», ասաց նա:

Ինչ վերաբերում է փոխհատուցմանը, ապա հաճախականություն տրամադրելու ձեւով չի լինի: Դրական պատասխանի դեպքում կլինի նյութական եւ բարոյական փոխհատուցում:

ԹԱՄԱՐ ՄԵԼԱՆՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս՝ 374 1 582863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏՐԵՍՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵՍՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ / հեռ. 581841
Հաճախորդ ծառայություն / հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ. 529353
Հաճախորդչային շարասեղը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրված մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԸՆԹԱՑԻԿ

Ut er orterում շաբաթ ու շաբաթ գրքեր են հրատարակվում: Դրանց մի մասը լավն է, մյուս մասը՝ անհաջող: Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դասախոս, արեւելագետ, պատմաբան Նուբար Չալըմյանի «Դիվանագիտական արարողակարգ եւ վարվելակերտ» աշխատությունն անհրաժեշտ գիրք է՝ իր տեսակի մեջ առաջինը հայ իրականության մեջ: Ի դեպ, անցյալ տարի լույս է տեսել հեղինակի մեկ այլ անհրաժեշտ ձեռնարկ՝ «Դիվանագիտական եւ հյուպատոսական ծառայություն եւ իրավունք»:

«Դիվանագիտական արարողակարգ եւ վարվելակերտ» ձեռնարկը, որ նախատեսված է միջազգային հարաբերությունների ուսանողների եւ սկսնակ դիվանագետների համար, նպատակ ունի իրազեկելու դիվանագիտական արարողակարգի (պրոտոկոլ) իրականացման եւ վարվեցողության (էտիկետ) սկզբունքներին ու նրբություններին՝ համադրելով միջազգայնորեն ընդունված չափանիշներն ու կանոնները հայ ժողովրդի ազգային սովորույթներին, ավանդույթներին:

«Ես շատ եմ նայել արեւելյան արարողակարգը, արաբական աշխարհինը, եվրոպականը: Մենք էլ մեր արարողակարգը պիտի ունենայինք: Եվ տարիների ընթացքում կարողացանք մշակել մերը՝ սովորելով ուրիշ ազգերից: Չի կարելի ասել, թե մեր արարողակարգը զուտ հայկական է», ասում է Չալըմյան դիվանագետը, որը եղել է նորանկախ Հայաստանի արտաքին գործերի նախարարության աշխատակից, իսկ մինչ այդ տարիների դիվանագիտական ծառայություն անցել Մերձավոր Արեւելքի արաբական միություն երկրներում:

Գիրքը կազմված է 14 բաժիններից եւ 4 հավելվածներից: Առաջին բաժնում՝ «Դիվանագիտական արարողակարգի եւ վարվելակերտի էությունն ու նշանակությունը միջազգային հարաբերություններում», Չալըմյանը գրում է. «Միջազգային կյանքում արարողակարգային կանոնների պահպանման նկատմամբ պետք է շատ ուշադիր լինել, խնդրի ցանկացած անզգույշ քայլ կարող է դիտվել որպես դիտավորություն եւ լուրջ հետեւանքներ ունենալ միջպետական հարաբերություններում: Արարողակարգի նորմերին չհամապատասխանող անպատասխանատու արարքը, վերջին հաշվով, միշտ էլ անհարմար եւ դժգոհություն է ստեղծում ընդհանուր երկրի իշխանությունների համար եւ սատանում նրա հեղինակությունը»:

Ձեռնարկի մյուս բաժիններում Չալըմյանը մատչելի գրչով ներկայացնում է դիվանագիտական ներկայացուցչությունների անձնակազմը եւ կառուցվածքը, դիվանագիտական աստիճանները, կորպուսը, արտոնություններն ու իմունիտետները, դիվանագետի զույգը, դիվանագիտական գաղտնության ձեւերը, արարողակարգը եւ վարվելակերտն ընդունելությունների ժամանակ, դիվանագիտական վարվելակերտի պահպանման նորմերը, մի խոսքով՝ դիվանագիտական այբուբենը, ինչը պարտադիր է սկսնակ դիվանագետների եւ ոչ միայն սկսնակների համար:

Ձեռնարկի 4 հավելվածները ներառում են «ՀՀ պետական արարողակարգի հիմնադրույթները», «ՀՀ ԱԳՆ «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության կանոնադրությունը», «Դիվանագետի էթիկայի կանոնները», ինչպես նաեւ տարբեր երկրների ազգային տոների օրացույցը:

«90-ական թթ. սկզբին, երբ ձեւավորվեց ՀՀ ԱԳՆ-ն, արարողակարգային դժվարություններ ենք ունեցել՝ ինչպես դիմավորել հյուրերին, օդանավակայանում ինչպես բարձրացնել դրոշը եւ այլն: Հետագայում, երբ անցա մանկավարժական աշխատանքի, անհրաժեշտություն կար դիվանագիտական արարողակարգի եւ վարվելակերտի մասին ձեռնարկի ուսանողների համար», այսպես է Չալըմյանը ներկայացնում ձեռնարկը գրելու անհրաժեշտությունը:

Չալըմյանը գրում է, որ «դիվանագիտությունն այն հազվագյուտ մասնագիտությունն է, որը մարդուն տրվում է ի վերուստ», «թույլ դիվանագետ չի լինում, լինում է սխալ մասնագիտությունն ընտրած մարդ»: Նա դիվանագետի դրական հատկանիշներ է որակում հայրենասիրությունը, պետական շահերի գիտակցումը, ինքնատիրապետումն ու հավասարակշռության պահպանումը բոլոր իրավիճակներում, համբերատարությունը, զգացմունքայնությունից զերծ մնալը:

Ա. Հ.

Դիվանագիտական արարողակարգ եւ վարվելակերտ

Միջազգայնագետ Նուբար Չալըմյանի նոր գիրքը

Ֆրանսիական համալսարանի կարգավիճակը փոխվել է

Հայաստանի եւ Ֆրանսիայի կառավարությունների որոշմամբ Հայաստանում ֆրանսիական համալսարանը դարձել է հիմնադրամ: Անցած տարվա դեկտեմբերից համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ ռեկտոր է ընտրվել ֆրանսիացի Պոլ Ռուսսեն: Գալիք ուսումնական տարվա ընդունելության քննությունների մասին հասարակությանը իրազեկելու նպատակով Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Անրի Կյունին երեկ մամլո ասուլիս էր հրավիրել դեսպանատանը, որին մասնակցում էին Ֆրանսիական համալսարան հիմնադրամի ռեկտորը, Հայաստանի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչը, ինչպես նաեւ համալսարանի 2 շրջանավարտները: «Այս տարվա սկզբից համալսարանում տեղի են ունեցել կառուցվածքային փոփոխություններ, որոնք հնարավորություն են տալիս ֆրանսիական մեթոդաբանությունը լայնորեն կիրառելով՝ լավագույնս իրականացնել համալսարանի ի սկզբանե որդեգրած առաքելությունը: Կամենում եմ շեշտել կրթօջախի նոր կարգավիճակը, համաձայն որի համալսարանը դարձել է հիմնադրամ, շահույթ չհետապնդող կառույց, որի հիմնական նպատակը Հայաստանի կառավարման ոլորտի մասնագետներ պատրաստելն է», ասաց դեսպանը: Հիմնադրամի հիմնադիր կազմում ընդգրկված են Ֆրանսիայի դեսպանը, արտաքին գործերի եւ կրթության նախարարությունները:

Համալսարանի ընդունելության քննություններում կատարվել են փոփոխություններ, որոնք, ըստ դեսպանի, թույլ կտան սուղել դիմորդների ընդհանուր զարգացածությունը, միջազգային գիտական, քաղաքական ու մշակութային կյանքի մասին նրանց գիտելիքները, ինչպես նաեւ եվրոպական որեւէ օտար լեզվի իմացությունը: Հաշվի են առնվելու նաեւ գրանցման թերթիկում դիմորդի նախասիրությունների մասին տվյալները:

Համալսարանի ռեկտորը նշեց, որ համալսարանը միայն ֆրանկոֆոնների համար չէ, այնտեղ կարելի է ընդունվել ֆրանսերեն բնավ չխոսելով: Ֆրանսերենի քննություն ուսանողները հանձնում են երկրորդ կուրսում, քանի որ մյուս կուրսերում որոշ դասընթացներ անցկացվում են ֆրանսերենով:

Ընդունելության քննությունները կանցկացվեն հուլիսի 15-31-ը:

Ռ. Պ.

ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ

Դանակահարություն

Հունիսի 6-ին ոստիկանության Տաշիրի բաժնի աշխատակիցները մարմնական վնասվածք հասցնելու կասկածանքով բերման են ենթարկել 1988 թ. ծնված Վրույր Պ.-ին: Պարզվել է, որ վերջինս դանակով հարվածել եւ մարմնական վնասվածք է պատճառել Հակոբ Մ.-ին: Դանակն առգրավված է, Վրույր Պ.-ն ստորագրությամբ բաց է թողնվել, կատարվում է նախաքննություն:

Գողոնը մնաց կոկորդին

Հունիսի 7-ին ոստիկանության Գավառի բաժնի աշխատակիցները գողություն կատարելու կասկածանքով բերման են ենթարկել 1973 թ. ծնված Զորիկ Պ.-ին: Մահիսին խանդել եւ գողացել է քաղաքամեջտեղում գտնվող, Արծվաքար թաղամասի կիսակառույց ջրամբարների տանիքների ծածկերի եւ միջնապատերի բետոնե կառույցները: Գողոնն առգրավված է, Զորիկ Պ.-ն ստորագրությամբ բաց է թողնվել, կատարվում է նախաքննություն:

Եղբայրը դանակահարեց եղբորը

Ինչպես տեղեկացանք ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչության օպերատիվ տեղեկագրից, հունիսի 7-ին ոստիկանության Վանաձորի բաժնի աշխատակիցները մարմնական վնասվածք հասցնելու կասկածանքով բերման են ենթարկել 1960 թ. ծնված, նախկինում դատված Գետրգ Մ.-ին: Նույն օրը վերջինս տանը վիճաբանության ժամանակ դանակահարել է եղբորը՝ Արամայիս Մ.-ին: Դանակն առգրավված է, Գետրգ Մ.-ն ձերբակալված է, կատարվում է նախաքննություն:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑՈՒ ՄՏԱԾՈՒՄ

Ատոմակայանի փակումը ճակատագրական սխալ կլինի

Փաստերը վկայում են, որ պետական ինքնուրույնությունը հիմնված է երկու գործոնի վրա՝ մարտունակ բանակի ու էներգետիկ պաշարի: Հայտնի է, որ տարածաշրջանում մեր բանակն իր այսօրվա խնդիրները բավարար լուծում է: Էներգետիկայի տեսակետից էլ մեր պահանջներն այսօր (խոսքը էլեկտրաէներգիայի մասին է) համեմատաբար անբավարար չեն մնում: Հենց այդ երկու գործոնի «առողջության» շնորհիվ է հաջողվում Հայաստանին վարել բավականին ինքնուրույն արտաքին ու ներքին քաղաքականություն: Բայց այդպիսի ինքնուրույնությունը դուր չի գալիս որոշ արտաքին ուժերի, որոնք եվրոկազմակերպությունների միջոցով խորամանկորեն փորձում են զրկել Հայաստանին էլեկտրաէներգիայի ինքնաբավարարման հարցում:

Առաջարկում են փակել հայկական ատոմակայանը, իբր թե տարածաշրջանում անվտանգությունը բարձրացնելու համար: Եթե իրոք պատճառն անվտանգությունն է, ապա թող խոստացած 100 միլիոն դոլարը ծախսեն ատոմակայանի տեխնիկական անվտանգությունն ավելացնելու համար, ոչ թե վերացնելու:

Մեր ինժեներական ուսումնասիրությունները մեզ համոզում են, որ Հայաստանն առաջիկա 20 տարում դեռեւս չի կարող իր նվազագույն էլեկտրաէներգիայի պահանջը ինքնուրույն բավարարել առանց ատոմակայանի: Օրինակ՝ հեռու չգնանք, նայենք ինչ վիճակում է հարեւան Վրաստանը, եւ ինչ վիճակում էինք մենք, մեր Սեւանի վիճակը, երբ չէր աշխատում ատոմակայանը: Եվ իզուր չէ, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը, բավարար նավթ ու գազ ունենալով, ձգտում է ատոմակայան ունենալ: Ռումիեսեւ նավթի ու գազի պաշարները խիստ սահմանափակ են: Հետեւաբար, այն պետությունները, որոնք չունեն ատոմային էլեկտրակայան՝ հետագայում կզրկվեն ինքնուրույն քաղաքականությունից:

Իսկ միայն ջրային էլեկտրակայաններով լուծել էներգետիկայի հարցը, այսօրվա պահանջարկի մակարդակով, անհնար է: Ուստի, մեր խորին համոզմամբ, այսօր մեր էներգետիկայի գլխավոր խնդիրներից է՝ ավելի բարձր մակարդակի հասցնել մեր ատոմակայանի անվտանգ աշխատանքը, ոչ թե հավերժ զրկել մեզ ինքնուրույն էլեկտրամատակարարումից:

ԱՐԿԱԴԻ ՄԱՐՈՒՇՅԱՆ
Ռազմնեներ

Եվրամիությունը ատոմակայանի փակման կոնկրետ ժամկետ չի նշում

Սկիզբը՝ էջ 1

Քննարկվել են նաեւ այլ խնդիրներ: Նշվել է, որ Հայաստանում լուրջ առաջընթաց է արձանագրվել մի շարք առումներով՝ վերջին 4 տարիներին համախառն ներքին արդյունքի 63 տոկոս, արդյունաբերության արտադրանքի 50 տոկոս, ներդրումների 60 տոկոս աճ եւ արտահանման ծավալների զգալի աճ: Չնայած դրական կողմը պարզաբանել է, թե ինչպիսին է հայկական սփյուռքի մասնակցությունը Հայաստանի տնտեսական կյանքում եւ ինչ ակնկալիներ կան առաջիկայի համար: Միաժամանակ անդրադարձ է եղել բիզնես եւ ներդրումային միջավայրին: Եվրամիության ներկայացուցիչներն ընդգծել են, որ դեռեւս լուրջ անելիքներ կան հարկային ծառայության աշխատանքում՝ կանխավճարների գանձման առումով: Հաջորդ խնդիրը վերաբերում էր արտահանող ընկերությունների ավելացված արժեքի հարկի վերադարձմանը: Ինչպես հայտնի է, արդեն մի քանի տարի այս խնդիրը վերջնականորեն չի կարգավորվում, շրջանառու միջոցների պակաս ստեղծելով արտահանողների մոտ:

Հայկական կողմի պահանջով նիստի օրակարգում դրվել է նաեւ Տրաստեկա ծրագրի հարցը: Ըստ Կարեն Ճշմարիտյանի, այդ ծրագրի արդյունավետությունը գնահատվել է անբավարար: Մտահոգությունն այն է, որ Ադրբեջանը կկասեցնի այդ ծրագիրը, քանի որ քարտուղարությունը գտնվում է Բաքվում: Առաջարկվել է քարտուղարությունը տեղափոխել Վրաստան: Քննարկվել է Տրաստեկա ծրագրում Իրանին ընդգրկելու հարցը:

Քաղաքական խնդիրներից առեւտրի եւ տնտեսական զարգացման հանձնաժողովը «Նոր հարեւաններ» ծրագրի մեջ ընդգրկվելու հարցը: Այդ հարցի առնչությամբ քվեարկություն է նախատեսվում այս տարվա հուլիսի 14-ին: Հայաստան-ԵՄ ենթակոմիտեի նիստում քննարկվել է ընտրություններին հաջորդած շրջանում Հայաստանի ներքաղաքական իրավիճակը: Կարեւորվել է Հայաստանի ինտեգրումը Եվրամիությանը, որպեսզի մեզ մոտ ստեղծվեն քաղաքական խնդիրների լուծման այնպիսի ավանդույթներ, որոնք ընդունելի են Եվրոպայում:

Անդրադառնալով ղարաբաղյան հարցի առնչությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի քաղաքական ղեկավարության հանդիպումներին, Կարեն Ճշմարիտյանը տեղեկացրեց, որ նիստում կարեւորվել է երկու երկրների արտգործնախարարների եւ հատկապես նախագահների հանդիպումից հետո արձանագրված առաջընթացը: Դրանից հետո որոշակիորեն փոխվեց ընտրություններից հետո Բաքվի որդեգրած դիրքորոշումը:

KFW բանկի ներկայացուցիչների այցը ՀՀ Կենտրոնական բանկ

Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանը եւ խորհուրդը հանդիպեցին KFW բանկի խորհրդի անդամ Ինգրիդ Մաքեուս Մայերի գլխավորած պատվիրակությանը, որը Հայաստան է ժամանել տարածաշրջանային այցի շրջանակներում: Հունիսի 10-ին պատվիրակությունը մեկնելու է Վրաստան:

Հանդիպման ընթացքում տիկին Մայերը նշեց, որ ԳԴՀ կառավարությունը մեծ դեր է հատկացնում միջին խավի զարգացմանը, եւ KFW-ն այդ տեսանկյունից միջին ձեռնարկություններին աջակցող գերմանական ամենամեծ բանկն է:

Կենտրոնական բանկի նախագահ Տ. Սարգսյանը նշեց, որ Հայաստանի կառավարությունը եւս կարեւորում է փոքր եւ միջին բիզնեսի ձեւավորումը, եւ այդ առումով Գերմանա-հայկական հիմնադրամի գործունեությունը շատ կարեւոր է, իսկ նրա արդյունավետությունը՝ ֆենոմենալ, քանի որ գրեթե չկան չվերադարձված վարկեր: Նա նաեւ գոհունակությամբ նշեց, որ KFW-ի հետ աշխատանքներ են տարվում ավանդների երաշխավորման հիմնադրամի ձեւավորման շուրջ: Ըստ ԿԲ նախագահի, բանկային համակարգի հուսալիության եւ նրա նկատմամբ վստահության բարձրացման խնդրի լուծմանը կնպաստի մշակվող երկու ծրագրերի՝ կորպորատիվ կառավարման հայեցակարգի եւ ավանդների երաշխավորման հիմնադրամի իրականացումը:

Զրուցակիցները հույս հայտնեցին, որ իրենք արդյունավետ համագործակցություն կծավալեն նաեւ հիպոթեքային վարկերի շուկայի զարգացման եւ կորպորատիվ կառավարման հայեցակարգերի ներդրման ուղղությամբ:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

Կրկնակի հանցագործություն

Ամեն անգամ, երբ անցնում եմ Աբովյան փողոցի Ավետիք Իսահակյանի արձանի շրջակա հասվածով, ինձ թվում է, որ քաղաքի այս մասը գրավել է թշնամին: Որովհետեւ միայն թշնամին ծաղր ու ծանակի ենթարկելով ազգային մեծ բանաստեղծի հիշատակը հավերժացնող կոթողը՝ նրա անմիջական հարեւանությամբ կտեղադրի խորովածանոց, գիշերային սրճարան (ստրիպտիզ պարերով), պաղպաղականոցների սեղաններ ու զանազան կրպակներ: Իսահակյան փողոցի մասից արձանը լրիվ պատնեշվեց լաբիրինթոս հիշեցնող խանութների շարով, որոնք հյուսիսից փակեցին արձանի տեսադաշտը: Ուսն ասում է՝ «Ախորժակը բացվում է ուտելիս»: Լավ զգալով անպատժելիության մթնոլորտը, մյուս ընչաքաղցը թեւ առած, ներքին



Խորհում. կրպակի հետեւում Ա. Իսահակյանի արձանը



լկտիությամբ որոշեց իր եկամտի աղբյուրը կառուցել ճիշտ արձանի դիմաց՝ դեպի Մոսկովյան փողոց: Երբեմնի սարգսենյա անցումը քանդեցին եւ խորհրդավորության պայմաններում սկսեցին կառուցել նախ եռահարկ սարգսենյա մասը, ապա ուղիղ մայթին, Աբովյան փողոցում կառուցվում է եռահարկ մի նոր ճաշարան: Ինձ շինարարության տեմպերը չի զարմացնում, նա վաղուց արդեն այս երկիրը համարում է իր տնամերձը՝ այն գիտակցությամբ, որ անշուշտ գյուղ է մտել, ինչ ուզի կանի:

Ինձ զարմացնում է մեր քաղաքապետը, աչխասանքից չխուսափող եւ լրջմիտ մի անձնավորություն, որի հետ ես անձամբ խոսել եմ այս հարցի շուրջ: Նա ինձ ասաց՝ թույլ չենք տա, որ մեկ մետրից ավելի բարձրանա շինությունը փողոցի կողմից, ոտ էր թե... Ինչ է, նա՞ էլ անզոր է: Թող հաշվեն, տեսնեն քանի մետրով բարձրացավ: Եվ ինչ այլանդակություն է խոյանում քաղաքի սրտում: Երբ այս մասին դեռ աշնանը դիմեցի Կենտրոնի քաղաքպետ Գագիկ Բեգլարյանին, նա ինձ ասաց՝ կարգելենք, գրիր մեզ գրավոր: Ես գրեցի եւ ինչ՝ պատասխան ստացա մի այլ չինովնիկի ստորագրությամբ, որ քաղաքի այդ մասի տարածքների հարցերով՝ շինարարությամբ ու յոտացումով զբաղվում է Երեւանի քաղաքապետարանը:

Մենք ունենք քաղաքի գլխավոր ճարտարապետ, որը կարծեմ ունի ճարտարապետի դիպլոմ եւ ինչ-որ մի ֆրանսիական շնորհաշնորհ: Ահա այդ շնորհանակրին ես հարց եմ տալիս՝ Փարիզում ինչ կանեին այն մարդուն, որն ուզում է Բալզակի արձանի առջեւ ռեստորան կառուցեր, այն էլ ամենակենտրոնական փողոցի մայթի վրա: Հավատացած եմ, կգամեին անարգանքի սյունին, նորակառույցը քանդելուց հետո:

Այն, ինչ կատարվում է նշածս հատվածում, երկակի հանցագործություն է նախ քաղաքաշինական, ճարտարապետական տեսանկյունից, երբ երբեմնի ծաղկուն այգին, ինչպես նոր տարվա տորթը, կտոր առ կտոր բաժանվում է մի խումբ գիշատիչների միջեւ, շենք է կառուցվում մայթին՝ խափանելով հետիոտնի ճամփան, եւ ամբողջապես խափանվում են տեսադաշտն ու հրապարակի անսամբլը: Եվ երկրորդ՝ սա հանցանք է լայն քաղաքական առումով, քանզի նման շինությունների տերն ու պատվեր կատարողն առանց այդ էլ մեր անհանգիստ երեւանում բազմապատկում են դժգոհ մարդկանց քանակը, սրում ժողովրդին ղեկավարության դեմ: Երեւանյան իշխանությունների վերջին տարիների քաղաքականությունը՝ ազգային սրբությունների աղավաղումը՝ Օպերայի հրապարակ եւ Հրազդանի կիրճի տարածք, Իսահակյանի արձանի հրապարակ եւ պուրակ, բենզինի լցակայանների անվերջ աճ գեղատեսիլ վայրերում, միայն ցասում ու բողոք է առաջացնում ժողովրդական զանգվածների շարքերում: Ոչ մի հանճարեղ ընդդիմադիր չի կարող այդպես վարպետորեն լարել զանգվածներին իշխանության դեմ, քան մեր քաղաքի պալատները: Եվ երկրորդ՝ սա հանցանք է լայն քաղաքական առումով, քանզի նման շինությունների տերն ու պատվեր կատարողն առանց այդ էլ մեր անհանգիստ երեւանում բազմապատկում են դժգոհ մարդկանց քանակը, սրում ժողովրդին ղեկավարության դեմ: Երեւանյան իշխանությունների վերջին տարիների քաղաքականությունը՝ ազգային սրբությունների աղավաղումը՝ Օպերայի հրապարակ եւ Հրազդանի կիրճի տարածք, Իսահակյանի արձանի հրապարակ եւ պուրակ, բենզինի լցակայանների անվերջ աճ գեղատեսիլ վայրերում, միայն ցասում ու բողոք է առաջացնում ժողովրդական զանգվածների շարքերում: Ոչ մի հանճարեղ ընդդիմադիր չի կարող այդպես վարպետորեն լարել զանգվածներին իշխանության դեմ, քան մեր քաղաքի պատասխանատուները: Նրանք նման օբյեկտների առաջ կանաչ լույս վառելով արգի ծառայություն են մատուցում երկրի ղեկավարությանը: Հավատացնում եմ, մի քանի «զորեղ» դրամախակատերերին կամ պատասխանատուներին հագտղ տալով, բարձրագույն իշխանությունը շատ ավելին է կորցնում: Ժողովուրդը սկսում է հեռանալ իշխանություններից, մարդիկ սկսում են մտածել, որ այս երկրում փողով կարելի է ամեն ինչ անել: Ինչ է, չկան մեծահարուստներ, մեծ պատասխանատուներ Փարիզում կամ Լոնդոնում, սակայն նրանք հո չեն գցում իրենց քաղաքի ճարտարապետական տեսքը՝ օրը ցերեկով ծաղրելով բոլորին ու արհամարհելով ոստոր չեն կառուցում քաղաքի ամենաբանուկ փողոցում, ամենահայտնի մարդու արձանի դիմաց:

Եկեք կբեռի վրա դնենք մի կողմից իմ հիշատակած մի քանի «ամենազորեղների» շահերը (որոնց կրծքով պատսպանում են քաղաքապետարանի չինովնիկները եւ գլխավոր ճարտարապետը) եւ հարյուր հազարավոր երեւանցիների դժգոհությունն ու վրդովմունքը եւ, բնականաբար, նման գործընթացից ծագած ենթադատությունը վերեւների հանդեպ, եւ տեսնենք, թե որ նժարը կգերազանցի...

Կուզեի այս ամենի վրա սեւեռել իր ուշադրությունը մեր ղեկավարությունը: Քաղաքական խնդիրներին, իսկ դրանց հիմքում առաջնային դեր ունեն ժողովրդի համակրանքն ու հավատը, չի կարելի ընթացք տալ հոգուս մի շարք մեծահարուստ ու մեծապատասխան մարդկանց ընչաքաղց շահերի՝ անտեսելով հարյուր հազարավոր մարդկանց կարծիքը:

ԱՎԱԳ ԻՍԱՀԱԿՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

Վերանորոգումները ջրամատակարարման համակարգը շարունակական խափանումներից չեն փրկում

Երեւանին, հետագայում նաեւ ողջ հանրապետությանը շուրջօրյա ջրամատակարարում ապահովելու մասին այսօր ամենատարբեր մակարդակներով շատ է խոսվում: Սպառողների համար գայթակղիչ այդ խոսումները որքանո՞վ են համապատասխանում ցանցի ներկա վիճակին ու երկրի ֆինանսական հնարավորություններին:

Ջրամատակարարման ու ջրահեռացման՝ ջրմուղի եւ կոյուղու խողովակաշարերը հանրապետությունում կազմում են 20 հազար՝ համապատասխանաբար՝ 15 եւ 5 հզ. կմ: Դրանց 60-70 տոկոսը 20 եւ ավելի տարվա կենսագրություն ունի, այսինքն՝ գերմաշվածության պատկառելի ցուցանիշներ: Այս հանգամանքով է պայմանավորված վերջին 15 տարիներին վթարների 4-5 անգամ աճը, դրանց պարբերական բնույթը, եւ այն հանգամանքը, որ չնայած խոսումներին, այդպես էլ չի հաջողվում անցնել անխաթար շուրջօրյա ջրամատակարարումների: Միայն խողովակաշարերից հոսակորուստները կազմում են 55-65 տոկոս: Հատկապես Գյումրիում այդ ցուցանիշն ավելի բարձր է. քաղաք մտած ջրի միայն մեկ երրորդն է հասնում սպառողին, մնացածը հողի տակ կորչում է: Ընդհանրապես, Երեւանի համեմատ հանրապետության մյուս բոլոր տարածքներում ջրահեռացման ու ջրամատակարարման ցանցի վիճակն ավելի աննպաստ է: Շատ վայրերում (այդպիսի օրինակների անդրադարձել է **«Ազգը»**) մարդիկ ստիպված օգտագործում են խմելու համար ոչ պիտանի, ասենք, ոռոգման ջուր: Խմելու ջրի խողովակաշարերի գերմաշվածությամբ են բացատրվում, օրինակ, Ալավերդի քաղաքում աղիքային հիվանդությունների հաճախակի բռնկումները: Եթե այս ամենին գումարենք նաեւ ջրօգտագործման համատարած խիստ ցածր կուլտուրան՝ շռայլումները, ապօրինի միացումները, ջրի աննպատակ օգտագործումը, ապա պատկերը լիարժեք կլինի:

Որպեսզի ջրամատակարարումն անխափան լինի, բնակավայրը պիտի ունենա նաեւ պաշարային ծավալներ, այսպես ասած՝ ներքին ռեզերվուարներ: Դրանք, իհարկե, կան, բայց ծավալներն առկա կարիքներին չեն համապատասխանում: Մեր աղբյուրները հավասար ելքով, 24 ժամ շարունակ ջուր են բերում եւ Երեւան, եւ մյուս քաղաքներ: Բայց դրանք կուտակելու հնարավորություն չկա, որպեսզի գոնե ջրամատակարարման համար նախընտրելի ժամերին այդ քանակն օգտագործվի:

Վերջին 10 տարվա ընթացքում, «Ջինջ» խորհրդատվական ընկերության նախագահ Էդուարդ Մեսրոպյանի խոստովանությամբ, համարյա չեն իրականացվել վերանորոգման աշխատանքներ: Եվ անկախ նրանից, թե ինչ օպերատիվությամբ են վերացվում վթարները, դրանք համակարգի փրկության համար որեւէ դերակատարում չեն կարող ունենալ: Տեղային նորոգումները չեն կարողանում կանխել քայքայումների համառ ընթացքը:

Մյուս կողմից, արդեն ակնհայտ է այն փաստը, ինչ այսօր շատ ասպարեզներում է նկատվում: Ցածր աշխատավարձերի պատճառով մասնագետ կադրերը լքել են եւ ջրամատակարարման, եւ առավել շատ ջրահեռացման ասպարեզը: Հին, փորձառու մասնագետների փոխարինումը ոլորտում պատահականորեն կամ հարկադրաբար հայտնված մարդկանցով բարդացնում է շահագործման աշխատանքները: Մասված խողովակաշարերը վերականգնելու համար բավական գումարներ են ծախսվում, սակայն ոչ մի փորձ չի արվում պարզաբանելու, թե իրականում ինչ է կատարվում հողի տակ, նույն վթարված խողովակի շրջակայքում, որ նոր վթարի պատճառ կարող է լինել: Եվ որպես կանոն, իբր նորոգված խողովակները կարճ ժամանակ անց նորից վթարվում են: Այսինքն, վաղուց պարզ է, որ խողովակները կցել-կարկատելու միջոցով դրանց կյանքը երկարաձգելն անօգուտ գործ է, ֆինանսները ֆամուն տալու նման մի բան: Պետությունը, սակայն, այսօր հարկադրաբար շարունակում է կիրառել պարզապես օրհասը երկարաձգելու՝ հընթացս, ժամանակ առ ժամանակ նորոգումներ կատարելու տարբերակ: Էդուարդ Մեսրոպյանը նշում է համակարգի անհուսալի վիճակի այլ հիմք եւս՝ ներդրումների վնասակար, անխնա օգտագործումը: «Գյուղերում համակարգի նորոգումների ծրագրեր իրականացնող ֆոնդերի ինժեներա-տեխնիկական գործունեությունը մասնագիտորեն, գիտականորեն չի համակարգվում: Դրա հետեւանքն այն է, որ արդեն ներդրումներ կատարված համայնքներում ընդամենը մի ձմեռ անց ողջ արվածը հողին է հավասարվում: Կան գյուղեր, ուր այդ ֆոնդերի միջոցով ջրամատակարարման համակարգ է կառուցվել, առանց, սակայն մաքրման որեւէ կայանի: Կառուցվել են վերգետնյա խողովակներ, որոնք սառել են գրեթե ընկնելուց հետո եւ հաջորդ տարի էլ չեն գործել»:

Համակարգի անկասելի քայքայումը կանխելու համար կտրուկ միջոցառումների անհրաժեշտությունը հասկանալի է անգամ ոլորտից հեռու կանգնած մարդկանց: Դրանք իրականություն դարձնելու համար, սակայն մասնագիտական հաշվարկները ահռելի գումար են նշում՝ մոտ 900 մլն դոլար: Դրա 400 մլն-ը կծախսվի առաջին 4-5 տարիների օպերատիվ վիրաբուժական միջամտությունների համար: Սակայն այդ գումարը նշվում է միայն ներկա պահի համար: Դարձյալ մասնագիտական հաշվարկներով, հետագայում, երբ ջրամատակարարման ցանցը կհայտնվի ավելի վատթար սահմանում, քան այսօր, այն խելքի բերելու համար պետք կլինի մոտ 2 մլրդ դոլար: Անհրաժեշտ գումարները ներկա պահին չկան եւ հույս էլ չկա, որ որեւէ տեղից ձեռք կբերվեն:

Անկախ այն իրողությունից, թե որքանով լավ կամ վատ են աշխատում շահագործող ծառայությունները, համակարգի անընդհատ քայքայման պայմաններում վթարներն անխուսափելի են լինելու: Դրանք արդեն մոտենում են քայքայումների կրիտիկական սահմանագծին, որից այն կողմ փրկել հնարավոր չէ: Հենց սրանով է պայմանավորված Արզնիի ջրամբարի հայտնի վթարը, որ մի քանի ամիս առաջ Կենտրոն եւ Արաբկիր համայնքների բնակչությանը նյութական ու բարոյական ահռելի վնասներ պատճառեց:

Այնուամենայնիվ, նույնիսկ այսպիսի իրավիճակում Երեւանի առանձին թաղամասերում հաջողվել է անցնել շուրջօրյա ջրամատակարարման: Բայց թե որքանով դրանք երկարատեւ ու հուսալի կլինեն, քանի դեռ չեն զուգորդվում լուրջ ներդրումներով, ամենահամառ լավատեսներն անգամ չեն կարող երաշխավորել: Պարզ է նաեւ, որ սակագների կրկնակի բարձրացումը համակարգի փրկության միջոց լինել չի կարող: Խիստ անբավարար են նաեւ պետբյուջեից ամենամյա ժլատ հատկացումները: Գոնե ներկա վիճակը պահպանելու, էլ ավելի վատին չհասնելու համար ջրամատակարարները սակագնային այլ թիվ են նշում՝ 1 խմ-ի համար 150 դրամ, այն էլ 80-90 տոկոս գանձումների պայմաններում: Եվ սա միայն խմելու ջրի համար, առանց կոյուղու սպասարկման: Աշխարհի շատ երկրներում այսօր գործում են խմելու ջրի սանդղակային-բազմատարիֆ սակագներ: Հայաստանում այդ սակագինը նույնն է եւ կարիքավոր ընտանիքի, եւ հարուստի եւ առավել եւս բիզնեսի կարիքների՝ լողավազաններում, ջակուզիներում, կազինոներում օգտագործելու համար: Հենց վերջիններիս համար ջրի սպառման ավելի բարձր սակագներ սահմանելով կարելի է լցնել՝ աղքատ ընտանիքներից ավելի ցածր սակագներ պահանջելու դեպքում պետական բյուջեում առաջացած ճեղքերը:

Երեւանի ջրամատակարարման համակարգը արդեն 4-5 տարի հանձնվել է մասնավոր օպերատորի՝ իտալական «Էյ Յուքիլիքի» կազմակերպությանը: Սակայն նա իրականացնում է ոչ թե համակարգի բարեփոխման, այլ շահագործման ու պահպանման գործառույթները: Նման պայմաններում, պարզ է, որ ոչ արդյունավետ շահագործում, ոչ էլ պահպանում առանց հիմնարար միջոցառումների, հնարավոր չէ:

«Էյ Յուքիլիքիի» երեւանյան առաքելությունը արդեն մոտենում է ավարտին: Արդեն սկսվել են Երեւանի ջրամատակարարման երկրորդ ծրագրի մշակման աշխատանքները: Նոր պայմանագի՞ր նոր օպերատորի հետ, նո՞ր պայմաններով, թե իտալացիների հետ համագործակցության փորձը հաշվի առնելով, ինչ ժամկետներով ու հիմունքներով, այդ խնդիրները այժմ կառավարական ենթակման փուլում են:

ԳԱՐԵՆ ՂԱՆԹԱՐՅԱՆ

«Մեծ ութնյակի» օրակարգում «Մեծ Մերձավոր Արևելք» ծրագիրն է

Գագաթաժողովին հրավիրել են Թուրքիայի գլխավորությամբ տարածաշրջանի մի շարք երկրներ

Ինչպես տեղեկացրել էինք, երեկ Ջորջիա նահանգի ափամերձ կղզիներից Սի Այլենդում սկսվեց «Մեծ ութնյակի» գագաթաժողովը հյուրընկալ երկրի՝ Մ. Նահանգների, ինչպես նաեւ Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Կանադայի եւ Ռուսաստանի ղեկավարների մասնակցությամբ: Երկօրյա գագաթաժողովի օրակարգում միջազգային ահաբեկչության դեմ պայքարի համաձեւսում Իրաքում ստեղծված իրավիճակին, իսրայելա-պաղեստինյան հակամարտության ու միջազգային շուկայում նավթի գների աճին առնչվող հարցերն էին:

Այլ կերպ՝ գագաթաժողովի առաջին օրը «Մեծ ութնյակի» ղեկավարները ննջարկել են նշված խնդիրները: Դրան հետեւել են վերջիններիս երկկողմ հանդիպումները: Իսկ այսօր, այսինքն՝ երկրորդ օրը որպես գագաթաժողովի առանցքային խնդիր ննջարկման է դրվելու «Մեծ Մերձավոր Արեւելք» ծրագիրը: Թերեւ այդ առումով պատահական չէր, որ գագաթաժողովին «Մեծ ութնյակի» հետ հրավիրվել են նաեւ տարածաշրջանի մի շարք երկրների ղեկավարներ: Հատկանշական է, որ այդ երկրներից Ալժիրը, Իրաքը, Հորդանանը, Բահրեյնը, Եմենը եւ Աֆղանստանը գագաթաժողովին մասնակցում են որպես «տարածաշրջանային գործընկերներ», իսկ Թուրքիան՝ «ժողովրդավարական գործընկեր» կարգավիճակով:

Այդ մասին հունիսի 8-ի հաղորդագրությամբ տեղեկացնում է «Անատոլու» գործակալությունը՝ միաժամանակ նշելով, որ գագաթաժողովի մասնակից տարածաշրջանային երկրների շարքում բացակայում են Եգիպտոսն ու Սաուդյան Արաբիան: Այս երկու երկրների բացակայությունն ամենայն հավանականությամբ պայմանավորված է «Մեծ Մերձավոր Արեւելք» ծրագրի նկատմամբ նրանց որդեգրած բացասական դիրքորոշումով: Ինչ վերաբերում է մյուս երկրներին, ապա պետք է ասել, որ նրանցից Իրաքը գագաթաժողովում ներկայացնում է երկրի նորանշանակ նախագահ Ղազի ալ Յաուերը, իսկ Թուրքիան՝ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը:

Ծրագրի մասին Իրանն ու Աֆղանստանն առ այսօր պաշտոնական որեւէ կարծիք չէին հայտնել: Սակայն ենթադրելի է, որ նրանք Ալժիրի, Հորդանանի, Բահրեյնի եւ Եմենի պես կողմ կարտահայտվեն: Առանձին դրույթներին առարկելով հանդերձ, ծրագիրը կպաշտպանի նաեւ Թուրքիան այն առումով, որ ներկա պահին Էրդողանի կառավարությանը հետաքրքրում է ոչ այնքան ծրագրի հնարավոր հետեւանքները տարածաշրջանի երկրների համար, որքան այն տեղն ու դերը, որը դրա իրագործմանը մասնակցության դեպքում պաշտոնական Վաշինգտոնից ակնկալում է Թուրքիան:

Ի դեպ, «Մեծ Մերձավոր Արեւելք» ծրագիրը պաշտպանում են նաեւ Թունիսն ու Լիբիան: Սա նշանակում է, որ ծրագրի բացասական հետեւանքներից խուսափելու համար ԱՄՆ-ին հակադրվող Եգիպտոսն ու Սաուդյան Արաբիան ակամա իրենց են հակադրում ինչպես տարածաշրջանի, այնպես էլ Հյուսիսային Աֆրիկայի երկրներին: Եթե այս հանգամանքը չսահմանափակի ծրագրին հակադրվելու Եգիպտոսի եւ Սաուդյան Արաբիայի հնարավորությունները, միեւնույն է, կհանգեցնի այդ երկրների հետ նրանց հարաբերությունների սրմանը: Այս պայմաններում եւ միջարաբական հակասությունները կսրվեն, եւ Եգիպտոսն ու Սաուդյան Արաբիան կկանգնեն տարածաշրջանում մեկուսացման սպառնալիքի առջեւ, իսկ ԱՄՆ-ն ամեն կերպ կնպաստի դրան:

«Մեծ Մերձավոր Արեւելք» ծրագիրը նոր չէ: Դեռեւս մշակվել է 90-ական թթ. սկզբներին, հետեւաբար Վաշինգտոնը ծրագրից չի հրաժարվի: Սակայն նա միանգամայն ի վիճակի է վերանայել Եգիպտոսի ու Սաուդյան Արաբիայի հետ հարաբերությունները: Ուրեմն եթե «Մեծ ութնյակի» գագաթաժողովը կարետր է ծրագրի ճակատագրի եւ դրա հետ կապված տարածաշրջանում ամերիկյան խաղաղականության մեջ Եգիպտոսի ու Սաուդյան Արաբիայի հետագա դերի համար, վարչապետ Էրդողանի ելույթն էլ կարետրվում է ծրագրում Թուրքիայի նշանակության համար: Թեեւ թուրքական պետության տեղի ու դերի մասին հազիվ թե բացահայտորեն հայտարարվի, սակայն Էրդողանի ելույթը, այնուամենայնիվ, հնարավորություն կտա որոշակի պատկերացումներ կազմելու ծրագրից Թուրքիայի ակնկալիքների մասին: Մնում է սպասել Էրդողանի ելույթին:

ՀԱՍԿՈՒ ՉԱՔԱՐՅԱՆ

Իսրայելը սպառնում եւ հարվածում է Լիբանանին

Իսրայելի պաշտպանության փոխնախարար Զեեւ Բոյիմը երեկ հայտարարել է, որ իր երկիրը թույլ չի տա Լիբանանը դարձնել «ահաբեկչական հարձակումների ցատկահարթակ»: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ այդ հայտարարությունից ընդամենը մի քանի ժամ առաջ իսրայելական օդուժը հարվածել էր Բեյրութի շրջակայքին: Վերջին 4 տարում դա իսրայելցիների ձեռնարկած նմանօրինակ առաջին հարձակումն էր:

Օդուժի գրոհին նախորդել էր երկուշաբթի առավոտյան լիբանանյան ջրեր մտած իսրայելական պարեկանավի արկակոծումը, որն իրականացվել էր Լիբանանի տարածից: Լիբանանյան աղբյուրները նշում են, որ ի պատասխան իսրայելական օդուժը Բեյրութի հարավում հարվածել է պաղեստինցի զինյալների դիրքերին: Իսրայելցի փոխնախարարի խոսքերով, թիրախ է դարձել Պաղեստինի ազատագրման ժողովրդական ճակատի պահեստը: Ըստ երեւույթին հենց այդ խմբավորման զինյալներն էին գնդակոծել իսրայելական պարեկանավը:

«Այն փաստը, որ մեր օդուժը հրթիռակոծեց Լիբանանի տնտեսական կենտրոն Բեյրութի շրջակայքը, ցույց է տալիս, որ այդ երկիրը կարող է թանկ վճարել իր տարածքից ահաբեկչական գործողությունների շարունակման դեպքում», զգուշացրել է Զեեւ Բոյիմը, որը կառավարող «Լիկուդ» կուսակցության անդամ է:

Իսրայելական օդուժի գրոհից հետո Լիբանանը բողոքի նամակ է ուղարկել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին:

Եվրամիության պահանջով Թուրքիան սկսում է քրդերեն հաղորդումների հեռարձակումը

Թուրքիայի պետական հեռուստաընկերությունը հունիսի 7-ից սկսել է հաղորդումներ հեռարձակել ազգային փոքրամասնությունների լեզուներով: Ռոյթեր գործակալությունը նշում է, որ դա արվում է Եվրամիության պահանջով, որին ուզում է անդամակցել Թուրքիան: Ավելի վաղ՝ 2002 թ. ԵՄ ճնշմամբ Թուրքիան վերացրել էր ազգային փոքրամասնությունների լեզուներով սովորելու եւ հեռարձակելու արգելքը:

Հունիսի 7-ին հաղորդումներ են հեռարձակվել բոսնիացիների լեզվով, որը մոտ է սերբերենին: TRT-3 հեռուստաալիքը հաղորդել է 30 րոպեանոց երաալիքը եւ ցուցադրել կարճ վավերագրական ֆիլմ: Մոտ օրերս սկսվելու են հաղորդումներ քրդերենի երկու բարբառներով, արաբերեն եւ չերքեզերեն:

ԵՄ-ի Թուրքիայի անդամակցության բանակցությունները երկար ժամանակ հետաձգվել են, քանի որ եվրոպացիներին մտահոգում էին այդ երկրում մարդու իրավունքների խախտումները եւ ազգային փոքրամասնությունների ճնշումները: Թուրքերը միշտ վախեցել են, որ ազգային լեզուների եւ մշակույթների զարգացումը կվտանգի պետության միասնականությունը: Ամենասուր քրդերեն հաղորդումների հեռարձակման հարցն էր, քանզի քրդական խմբավորումները 1980-ական թթ.-ից մարտնչում են Թուրքիայից անջատվելու համար: Մոտավոր հաշվարկներով, մարտերի ընթացքում ավելի քան 30 հազար մարդ է զոհվել:

70 միլիոնանոց Թուրքիայում քրդերի թիվը հասնում է մոտ 12 միլիոնի: Նրանց լեզուն հնդեվրոպական է եւ բնավ նման չէ թուրքերենին:

ՈՒՍԱՍՏԱՆԻ 100 ՄԵԾԱՇՐՋԻՍՏԵՐԸ

Եվ ոչ մի հայ «Ֆորբսի» ցուցակում

«Ֆորբս» ամսագրի հատուկ թողարկումը՝ նվիրված Ռուսաստանի 100 ամենահարուստ բիզնեսմեններին, տխուր խոհեր է առաջացնում: Կրկին հօդս է ցնդում հայաստանյան այն տխրահռչակ թեզը, թե իբր հայերի ու հրեաների միջեւ մեծ ընդհանրություններ կան: Ծանոթանալով ցուցակին, «ազգային առումով» խոր հոռետեսության գիրկն ես ընկնում: Ով ասես չկա այդ հարյուրյակում՝ հրեա, ռուս, վրացի, ադրբեջանցի, եւ... ոչ մի հայ: Պատկերացնո՞ւմ եք՝ ոչ մի միլիոնատեր հայ ձեռնարկատեր բովանդակ Ռուսաստանում: Վիրավորական է, չէ՞: Մինչեւ անկախանալը մենք բավականին բարձրակարգ ազգ էինք, մեծ անհատականություններ ունեինք, այդ թվում նաեւ Մոսկվայում:

Ցուցակի մեծ մասի լիիրավ տնօրենը, իհարկե, հրեաներն են: Միլիարդատերերի մեջ նրանց տոկոսը մոտենում է բացարձակի: Մեծահարուստների եկամտի աղբյուրները Ռուսաստանի ազգային հարստություններն են՝ նավթ, գազ, գունավոր մետաղներ, ածուխ, զանազան ֆինանսական ու բանկային գործառնություններ եւ այլն: Գրեթե ոչ մի արտադրություն, ոչ մի արտադրանք:

Առհասարակ հետաքրքրական են այդ «արտասովոր» մարդկանց վերաբերյալ «Ֆորբսի» մեկնաբանությունները:

Աբխազիան կոգնի Հարավային Օսիային, որը ՌԴ-ին խնդրում է ճանաչել իր անկախությունը

Եթե Ցխինվալի շրջանում իրադրությունը էաս սրվի, ապա Աբխազիան Հարավային Օսիային կոգնի սեփական զինված ուժերով: Այդ մասին Աբխազիայի հեռուստատեսությամբ հայտարարել է իրեն անկախ հռչակած հանրապետության վարչապետ Ռաուլ Խաջիմբան: Աբխազ վարչապետի հայտարարությունն արվել է Հարավային Օսիայի սահմանների մոտ վրացական ռազմական տեխնիկայի եւ զինծառայողների կուտակման պայմաններում:

Ռոսբալտ գործակալությունը հիշեցնում է, որ ավելի վաղ համանման հայտարարություն էր արել Մերձդնեստրի ինքնահռչակ հանրապետության ղեկավար Իգոր Սմիռնովը: Նրա խոսքերով, Վրաստանի ուժային գործողությունների դեպքում Մերձդնեստրը Հարավային Օսիային կհասկացնի տարբերություն, այդ թվում ռազմական օգնություն:

Վրաստանի իշխանությունները խոսքով բացառում են ուժի կիրառման հնարավորությունը, բայց չեն թաքցնում Հարավային Օսիան Վրաստանին միացնելու իրենց ծրագրերը: Խորհրդարանի նախագահ Նինո Բուրջանաձեի խոսքերով, Վրաստանի իշխանությունները պատրաստ են ինքնավար կարգավիճակ տրամադրել Ցխինվալին:

Սակայն Հարավային Օսիայի նախագահ Էդուարդ Կոկոյտին հայտարարել է, որ հանրապետության բնակչությունը պատրաստ է լոկ բարիդրացիական հարաբերություններ հաստատել Վրաստանի հետ: «Բնակչությունը կատարել է իր ընտրությունը. մենք ինքնիշխան պետություն ենք», ընդգծել է նա:

Միաժամանակ ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ Հարավային Օսիայի խորհրդարանը դիմել է Ռուսաստանի Պետդումային՝ խնդրելով ճանաչել հանրապետության անկախությունը եւ միջոցներ ձեռնարկել Հարավային Օսիայում ապրող ՌԴ քաղաքացիներին պաշտպանելու նպատակով:

Հուսեյնին մեղադրելու համար ապացույցներն անբավարար են

Մեծ Բրիտանիայի կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկն իր անունը չհրապարակելու պայմանով «Թայմս» թերթի թղթակցին ասել է, որ ամերիկացի քննիչները բավարար ապացույցներ եւ վկայական ցուցմունքներ չունեն Իրաքի նախկին նախագահ Սադդամ Հուսեյնին որպես բռնակալի եւ ոճրագործի մեղադրելու համար:

Բրիտանացի պաշտոնյան ընդգծել է, որ թեեւ հաջողվել է ձերբակալել Հուսեյնի վարչակարգի 55 կարետր դեմքերից 40-ին, նրանցից ոչ մեկը չի ուզում վկայություններ տալ նախկին բռնակալի դեմ: Այստեղ էական դեր է խաղում վախի գործոնը: Հուսեյնին կարելի է մեղադրել, բայց իրավիճակը սեփական փորձով գիտեն, որ եթե իրենք ինչ-որ բան ասեն քննիչներին, ապա կտուժեն իրենց ընտանիքները:

Այսպես, հունիսի 5-ին Իրաքում սպանվեց Հուսեյնի որդիներին մատնած եւ ամերիկացիներից 30 մլն դոլար ստացած մարդու եղբայրը: Մինչդեռ Հուսեյնի ոճրագործությունների վերաբերյալ ամերիկացիների վավերական ապացույցներն անբավարար են: Քննիչներն ասիճանաբար հասկանում են, որ Սադդամ Հուսեյնը եղել է ոչ միայն դաժան, այլեւ անչափ խորամանկ բռնակալ:

Չկան գրավոր ապացույցներ, թե հենց Հուսեյնն է կարգադրել գործելու այս կամ այն ոճիրը: Նրա անվան հետ կապված չէ որեւէ փաստ, որը հնարավոր կլիներ որակել որպես պատերազմական կամ հակամարդկային ոճիր: Հուսեյնը միշտ տվել է բանավոր ցուցումներ, իսկ բոլոր փաստաթղթերով զբաղվել են նրա ենթակաները:

Անցյալ տարվա դեկտեմբերի 13-ին ամերիկացիները ձերբակալեցին Սադդամ Հուսեյնին եւ մինչ օրս նրան պահում են գաղտնի տեղում: Իրաքում հատուկ դատարան պետք է ստեղծվի նրան եւ զինակիցներին դատելու համար: Սպասվում է, որ Հուսեյնին մեղադրանքներ կներկայացվեն 1980-1990-ական թթ. շիաների զանգվածային մահապատիժների, Քուվեյթի վրա հարձակվելու համար:

Բացի դրանից, Ֆրանսպրեսն գործակալության տվյալներով, Իրանը պաշտոնական փաստաթղթեր է նախապատրաստում, որպեսզի Հուսեյնին մեղադրանքներ ներկայացնի 1980-88 թթ. պատերազմի ժամանակ իրանցի գերիների նկատմամբ կիրառված խոշտանգումների առնչությամբ:

Իրաքի արդարադատության նախարարն օրերս լրագրողներին հայտարարեց, որ հունիսի 30-ի իշխանափոխությունից հետո երկրում թերեւս վերականգնվի մահապատիժը: Նա չբացառեց, որ Հուսեյնի նկատմամբ կիրառվի հենց այդ պատժամիջոցը:

Սադդամ Հուսեյնի հարազատները նրա համար վարձել են 20 փաստաբանների, բայց առայժմ վերջիններիս չի հաջողվել հանդիպել Հուսեյնի հետ, որի կալանավայրը, ինչպես վերը նշվեց, գաղտնի է պահվում: Տվյալ հանգամանքը հիմք ընդունելով փաստաբանները հայտարարում են, որ ամերիկացիները խախտում են Ժնեւի կոնվենցիայի պահանջները:

Պ. Բ.

Մշակույթ

Ս ոչ յոթ տարվա սպասումից հետո ներկա եղանք «Անուշ»-ի նոր բեմադրությանը: Ակնկալիները մեծ էին, սակայն...

Նկատի ունենք Գեղամ Գրիգորյան բեմադրիչի օրոք օպերային խաղացանկի ամենասիրված, նաեւ մեր թատրոնի լավագույն ներկայացումներից Բելլինիի «Նորմա»-ի գրիգորյանական տարբերակի մոսկովյան հյուրախաղերի օրերին խայտառակ բեմելը, Վերդիի «Տրավիատա» օպերայի սիրողական մակարդակից անգամ ցածր ներկայացումը թատրոնի վերանորոգումից հետո նրա վերաբացման օրը:

Միանգամից ասենք, որ այս հրաշալի օպերան զրկվել էր իր պայծառ նրբերանգներից, լուսավոր միամտությունից ու անմեղությունից, գեղջկական մթնոլորտի հմայից: Որոնցնդոս խայլերգային «երաժշտության», գոռացող արիաներից, ողջ ներկայացումը «ֆորտեներով» հնչեցնելուց այս դժբախտ սիրո քնքուշ զգացումների պատմությունը ներկայանում էր որպես սառը, անտարբեր, գոռոիկ ու հիստերիկ, չափազանցված միգանցեներով խճողված մի խառնափնթոր: Որեւէ հեռավոր կապ՝ ճաշակի, ոճիսորական իսկական մտահոգման, հարուստ գեղարվեստական երեւակայության հետ՝ գոյություն չուներ: Անճաշակություն, բարքերի, ժամանակի, ազգագրական նյութի, պարտիտուրայի բացարձակ անիրազեկություն:

Երեւի թե Բիզեի «Կարմեն»-ի սեղանի վրա պարելը գինետանը այնպիսի անջնջելի տպավորություն էր թողել բեմադրիչ Գեղամ Գրիգորյանի վրա, որ նա իր երազանքը իրականացրել էր «Անուշ»-ում գյուղական հարսանիքի ճերմակ սփռոցը կոկիկ հավաքելուց հետո՝ նույն հարսանյաց սեղանի վրա տեղափոխելով Սարոյի ու Մոսիի կոխի տեսարանը:

Ամեն մի տեղափոխություն դեռ հեղափոխություն չի ու նորամուծություն չի, եթե չասենք՝ սրբապղծություն ազգային ավանդույթների նկատմամբ:

Ողջ հարսանիքի տեսարանում Սարոն հիստերիկ կերպով դոփում էր, բենամական հայացքը սեւեռած Մոսիին, կարծես թե գլամարտի էր ներքաշում Մոսիին:

Ես չհավատացի, երբ պատմեցին, թե հեռուստատեսությամբ ներկայացման առթիվ Գ. Գրիգորյանն իր անչափ արժեքավոր կասկած-կարծիքներն էր արտահայտել Թումանյանի պոեմի հիմնական հանգուցակետի առիթով: Այն է՝ «Սարոյի ու Մոսիի թենամությունը չէր կարող մի կոխի պատճառով լինել, այն խորը արմատներ ուներ»: Ուստի վերջինս չէր հապաղել սրբագրելու Մեծն Թումանյանին ու ցանկալու՝ «խորացնելով կոնֆլիկտները»: Իհարկե, դրան մեծապես «օգնեցին» ռուս գեներալի ու նրա լոգվա «խորված-քաբաքներից», հայ գեղջկական ավանդական հարսանյաց սեղանին չգիտես որտեղից հայտնված ու ողջ դահլիճը խնկով բուրող հսկա ռուսական «սամովար»-ի ծխից հարբած սպայակի կերպարները: Սա էլ գուցե ռուսական, թե՞ սունդուկյանական ազդեցությանը պիտի վերագրել, որն այս դեպքում եւ վրիպում էր ու հանդիսականների տխուր ժպիտն էր շարժում: Իսկ Սարոյի սպանվելը՝ հրաձգարանում անմեղ կանգնած բադ խփելու էր նման, որի դին վերցնելուն նախորդ բարեխղճորեն պարտաս սպասում էին վեց կտրիճներ:

Ողբալ էզ, մերօրյա օպերային բեմադրիչ: Ավելի լավ չէ՞ր մեկ անգամ կարգին Թումանյան կարդալ մինչեւ վերջ, էլ չեմ ասում թումանյանագետներին:

Երաժշտական աշխարհում բացի նոր բեմադրություններ կատարելուց, նույնքան բնորհակալ գործ է, երբ վերքնամությունը չէր կարող մի կոխի պատճառով լինել, այն խորը արմատներ ուներ»: Ուստի վերջինս չէր հապաղել սրբագրելու Մեծն Թումանյանին ու ցանկալու՝ «խորացնելով կոնֆլիկտները»: Իհարկե, դրան մեծապես «օգնեցին» ռուս գեներալի ու նրա լոգվա «խորված-քաբաքներից», հայ գեղջկական ավանդական հարսանյաց սեղանին չգիտես որտեղից հայտնված ու ողջ դահլիճը խնկով բուրող հսկա ռուսական «սամովար»-ի ծխից հարբած սպայակի կերպարները: Սա էլ գուցե ռուսական, թե՞ սունդուկյանական ազդեցությանը պիտի վերագրել, որն այս դեպքում եւ վրիպում էր ու հանդիսականների տխուր ժպիտն էր շարժում: Իսկ Սարոյի սպանվելը՝ հրաձգարանում անմեղ կանգնած բադ խփելու էր նման, որի դին վերցնելուն նախորդ բարեխղճորեն պատրաստ սպասում էին վեց կտրիճներ:

Ողբալ էզ, մերօրյա օպերային բեմադրիչ: Ավելի լավ չէ՞ր մեկ անգամ կարգին Թումանյան կարդալ մինչեւ վերջ, էլ չեմ ասում թումանյանագետներին:

Երաժշտական աշխարհում բացի նոր բեմադրություններ կատարելուց, նույնքան բնորհակալ գործ է, երբ վերարկանգնում ես նախկինում այս կամ այն ներկայացման լավագույն բեմադրությունները՝ անգամ մազ չփոխելով դրանցից: Դա նշանակում է, որ գիտես հարգել ավանդույթները, որ վստահորեն տիրապետում ես գործիդ ու չես վախենում էզ նախորդած տաղանդների ստվերներից: Սա բաս պատվաբեր գործ է: Իսկ անել այն, որից գաղափար չունես՝ ոչ միայն ամոթ է, այլեւ կործանարար:

Իհարկե, այս ամենը այնքան էլ ողբերգական չէր լինի, եթե մարդիկ գոնե աչքերը փակ՝ երաժշտությունը լսեին: Երաժշտություն էլ չկար: Տիգրանյանի անմահ օպերան խայլերգերի, գոռում գոչյունների մի խուլ միասնություն էր, որ նվագախումբը ոչ մի վայրկյան չկարողացավ ներդաշնակորեն նվագակցել երգչախմբին, երգիչ-երգչուհիներին: Տասնյակ տարիների ընթացքում մեր օպերային նվագախումբը կատարողական այնպիսի մի ավանդական ներդաշնակություն էր ձեռք բերել, որ դրանից հետո այս կատարումը միայն գոռոիկ ու վայրագ կարելի է որակել:

«Ինչո՞ւ այս դիրիժորը պարարտ տեղը չափազանցված ձեռնածություն կընե, երբ ոչ մեկ մաքուր ու ներդաշնակ ձայն կրցավ հանել նվագախումբեն: Այս կերպ կուզե պարարտ տպավորությո՞ւն ձգել մեզ վրա», զարմանքով ծիծաղում էին սփյուռքահայ հարեւան հանդիսատեսները, որոնց դիտարկումը միանգամայն իրավացի գտա: Նվագախումբը, որ վերջին չորս տարիներին անիրավացիորեն զրկվել էր իր հասուն երաժշտներից, այն փոխարինելով երիտասարդ անփորձ երաժշտներով (որոնք բաս բան ունեին սովորելու, եթե մի քանի տարի նվագեին նրանց կողքին)՝ նման էր խղճուկ սիրողական մակարդակի մի երաժշտախմբի՝ առանց ավանդույթների ու կատարողական կուլտուրայի:

Դիրիժորի կողմից աղավաղվել էին անգամ հեղինակային բոլոր տեմպային նշումները:

Գալով մենակատարներին, երեւի խեղճերը խեղդվելով ինքնաեռից ու Սարոյի խարույկից առատորեն արձակվող վարդաբույր ծխից՝ խեղդուկ ձայներ էին արձակում: Անուշի դերակատարուհին իր տարիքին ոչ հարիր ձայնային տատանումներով խանգարում էր կենտրոնանալ կերպարի վրա: Սարոյի ինարական դերերգը ոչ մի կապ չուներ այս ներկայացման Սարոյի երգեցողական հոմշկոցային ու բռի կատարման հետ, որի անկումային կետը «Բարձր սարերն» էր՝ նվագախումբ-երգիչ միմյանց խլացնելու ջղագրգիռ մենամարտով: Միակ անդրդվելի դրական կետն այս ներկայացման մեջ Մոսին էր, որը հմայիչ կերպով հիշեցնում էր մեր Մոսիներին՝ Վահրամ Գրիգորյանին, Դավիթ Պողոսյանին, Արտավիր Կարապետյանին: Ափսոս, որ Գոհար Գասպարյան ու Ավագ Պետրոսյան ասվածաշունչ ու անգերազանցելի «սիրահարներին» լսածները պիտի կարծեին, թե բոլորովին մի այլ ներկայացում են դիտում:

Արդյո՞ք օթյակում բազմած նորանշանակ մշակույթի նախարարին չհուզեց մեղանչումները մեր մշակույթի այս մարգարտի նկատմամբ: Գոնե Թումանյանի դեմ սրբապղծությունը նրան հուզեր: Կարծում էինք, թե հաջորդ օրն իսկ պիտի արտակարգ մի հավաք հրավիրեր՝ ի շահ ոչ միայն «Անուշ»-ի, այլեւ մեր արժանապատվության ու մեր թատրոնի փրկության, նրան կործանման ճանապարհից հետ դարձնելու՝ քանի դեռ բաս ուշ չէ:

Ովքե՞ր են հովանավորում մեր մշակույթը խեղաթյուրող, ազգային օպերան գավառական մակարդակի փորձադաշտի վերածած սիրողական որակի պատեհապաշտներին:

ԱՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դիրիժոր

Ո՞վ է հովանավորում ազգային օպերային թատրոնի կործանումը

«Անուշ»-ի նոր «բեմադրության» առիթով

«Անուշ»-ի մեր փայլուն բեմադրությունների ավանդույթները՝ ի դեմս Գուլակյանի, Ամեմյանի, Լեւոնյանի (այնքան ինքնադաստված, սակայն ոչ միշտ իրավացիորեն) ներկայացումների, մինչեւ օրս հանդիսատեսների հիշողության մեջ անջնջելի պայծառ զգացումներ են թողել, որոնց մասին թատերագիտական գրականությունը դեռ ասելիք շատ ունի: «Անուշ»-ը մեր այն արժեքներից է, որ հանճարեղ ներդաշնակությամբ միաձուլել է թումանյանական ու տիգրանյանական, մեր հայ խոսքի ու երգի աղեսը՝ դառնալով ազգային խորհրդանիշ, մասնիկ մեր հոգարտության: «Անուշ» մենք սիրում ենք գնալ ոչ միայն հյուրերի հետ՝ ներկայացնելու մեր հայկական շքեղ երգ-օպերան, այլեւ մեր երեխաների հետ՝ որպես պատգամ նրանց փոխանցելու մեր սերը երկրի, հող ու ջրի, երգի, սովորությունների, բնության հարստության ու հոգարտության զգացումները:

Գեղամ Գրիգորյանի «Անուշը» «սեւ էր բերել» ոչ միայն բեմին, գերակշռող դարձնելով այդ գույնը բեմի վրա, այլեւ չօգտագործելով բեմական հնարավորությունները՝ խորությունը, դեկորները, ներկայացումը «ամոթխածորեն» տեղավորելով բեմի միայն առջեւի կեսի վրա՝ Լոռվա հրաշալի բնությունից դույզն իսկ պատկերացում չուզենալով տալ հանդիսատեսին՝ անիմաստ համառությամբ ոչ մի տուրք չտալով օպերային ներկայացումներին այնքան հատուկ պայմանականություններին: Մեր հարուստ բնության հրաշքներն այս ներկայացման մեջ սահմանափակվեցին միայն անընդհատ տեղացող ձյանն ուղեկցող անհանդուրժելի տեխնիկական աղմուկի ու երաժշտության անիմաստ միաձուլմամբ, երբ չես տարբերում հոնդյունը երաժշտությունից:

Միանգամից ասենք, որ այս հրաշալի օպերան զրկվել էր իր պայծառ նրբերանգներից, լուսավոր միամտությունից ու անմեղությունից, գեղջկական մթնոլորտի հմայից: Որոնցնդոս խայլերգային «երաժշտության», գոռացող արիաներից, ողջ ներկայացումը «ֆորտեներով» հնչեցնելուց այս դժբախտ սիրո քնքուշ զգացումների պատմությունը ներկայանում էր որպես սառը, անտարբեր, գոռոիկ ու հիստերիկ, չափազանցված միգանցեներով խճողված մի խառնափնթոր: Որեւէ հեռավոր կապ՝ ճաշակի, ոճիսորական իսկական մտահոգման, հարուստ գեղարվեստական երեւակայության հետ՝ գոյություն չուներ: Անճաշակություն, բարքերի, ժամանակի, ազգագրական նյութի, պարտիտուրայի բացարձակ անիրազեկություն:

Երեւի թե Բիզեի «Կարմեն»-ի սեղանի վրա պարելը գինետանը այնպիսի անջնջելի տպավորություն էր թողել բեմադրիչ Գեղամ Գրիգորյանի վրա, որ նա իր երազանքը իրականացրել էր «Անուշ»-ում գյուղական հարսանիքի ճերմակ սփռոցը կոկիկ հավաքելուց հետո՝ նույն հարսանյաց սեղանի վրա տեղափոխելով Սարոյի ու Մոսիի կոխի տեսարանը:

Ամեն մի տեղափոխություն դեռ հեղափոխություն չի ու նորամուծություն չի, եթե չասենք՝ սրբապղծություն ազգային ավանդույթների նկատմամբ:

Ողջ հարսանիքի տեսարանում Սարոն հիստերիկ կերպով դոփում էր, բենամական հայացքը սեւեռած Մոսիին, կարծես թե գլամարտի էր ներքաշում Մոսիին:

Ես չհավատացի, երբ պատմեցին, թե հեռուստատեսությամբ ներկայացման առթիվ Գ. Գրիգորյանն իր անչափ արժեքավոր կասկած-կարծիքներն էր արտահայտել Թումանյանի պոեմի հիմնական հանգուցակետի առիթով: Այն է՝ «Սարոյի ու Մոսիի կոխի պատճառով չէր կարող մի կոխի պատճառով լինել, այն խորը արմատներ ուներ»: Ուստի վերջինս չէր հապաղել սրբագրելու Մեծն Թումանյանին ու ցանկալու՝ «խորացնելով կոնֆլիկտները»: Իհարկե, դրան մեծապես «օգնեցին» ռուս գեներալի ու նրա լոգվա «խորված-քաբաքներից», հայ գեղջկական ավանդական հարսանյաց սեղանին չգիտես որտեղից հայտնված ու ողջ դահլիճը խնկով բուրող հսկա ռուսական «սամովար»-ի ծխից հարբած սպայակի կերպարները: Սա էլ գուցե ռուսական, թե՞ սունդուկյանական ազդեցությանը պիտի վերագրել, որն այս դեպքում եւ վրիպում էր ու հանդիսականների տխուր ժպիտն էր շարժում: Իսկ Սարոյի սպանվելը՝ հրաձգարանում անմեղ կանգնած բադ խփելու էր նման, որի դին վերցնելուն նախորդ բարեխղճորեն պատրաստ սպասում էին վեց կտրիճներ:

Ողբալ էզ, մերօրյա օպերային բեմադրիչ: Ավելի լավ չէ՞ր մեկ անգամ կարգին Թումանյան կարդալ մինչեւ վերջ, էլ չեմ ասում թումանյանագետներին:

Երաժշտական աշխարհում բացի նոր բեմադրություններ կատարելուց, նույնքան բնորհակալ գործ է, երբ վերարկանգնում ես նախկինում այս կամ այն ներկայացման լավագույն բեմադրությունները՝ անգամ մազ չփոխելով դրանցից: Դա նշանակում է, որ գիտես հարգել ավանդույթները, որ վստահորեն տիրապետում ես գործիդ ու չես վախենում էզ նախորդած տաղանդների ստվերներից: Սա բաս պատվաբեր գործ է: Իսկ անել այն, որից գաղափար չունես՝ ոչ միայն ամոթ է, այլեւ կործանարար:

Իհարկե, այս ամենը այնքան էլ ողբերգական չէր լինի, եթե մարդիկ գոնե աչքերը փակ՝ երաժշտությունը լսեին: Երաժշտություն էլ չկար: Տիգրանյանի անմահ օպերան խայլերգերի, գոռում գոչյունների մի խուլ միասնություն էր, որ նվագախումբը ոչ մի վայրկյան չկարողացավ ներդաշնակորեն նվագակցել երգչախմբին, երգիչ-երգչուհիներին: Տասնյակ տարիների ընթացքում մեր օպերային նվագախումբը կատարողական այնպիսի մի ավանդական ներդաշնակություն էր ձեռք բերել, որ դրանից հետո այս կատարումը միայն գոռոիկ ու վայրագ կարելի է որակել:

«Ինչո՞ւ այս դիրիժորը պարարտ տեղը չափազանցված ձեռնածություն կընե, երբ ոչ մեկ մաքուր ու ներդաշնակ ձայն կրցավ հանել նվագախումբեն: Այս կերպ կուզե պարարտ տպավորությո՞ւն ձգել մեզ վրա», զարմանքով ծիծաղում էին սփյուռքահայ հարեւան հանդիսատեսները, որոնց դիտարկումը միանգամայն իրավացի գտա: Նվագախումբը, որ վերջին չորս տարիներին անիրավացիորեն զրկվել էր իր հասուն երաժշտներից, այն փոխարինելով երիտասարդ անփորձ երաժշտներով (որոնք բաս բան ունեին սովորելու, եթե մի քանի տարի նվագեին նրանց կողքին)՝ նման էր խղճուկ սիրողական մակարդակի մի երաժշտախմբի՝ առանց ավանդույթների ու կատարողական կուլտուրայի:

Դիրիժորի կողմից աղավաղվել էին անգամ հեղինակային բոլոր տեմպային նշումները:

Գալով մենակատարներին, երեւի խեղճերը խեղդվելով ինքնաեռից ու Սարոյի խարույկից առատորեն արձակվող վարդաբույր ծխից՝ խեղդուկ ձայներ էին արձակում: Անուշի դերակատարուհին իր տարիքին ոչ հարիր ձայնային տատանումներով խանգարում էր կենտրոնանալ կերպարի վրա: Սարոյի ինարական դերերգը ոչ մի կապ չուներ այս ներկայացման Սարոյի երգեցողական հոմշկոցային ու բռի կատարման հետ, որի անկումային կետը «Բարձր սարերն» էր՝ նվագախումբ-երգիչ միմյանց խլացնելու ջղագրգիռ մենամարտով: Միակ անդրդվելի դրական կետն այս ներկայացման մեջ Մոսին էր, որը հմայիչ կերպով հիշեցնում էր մեր Մոսիներին՝ Վահրամ Գրիգորյանին, Դավիթ Պողոսյանին, Արտավիր Կարապետյանին: Ափսոս, որ Գոհար Գասպարյան ու Ավագ Պետրոսյան ասվածաշունչ ու անգերազանցելի «սիրահարներին» լսածները պիտի կարծեին, թե բոլորովին մի այլ ներկայացում են դիտում:

Արդյո՞ք օթյակում բազմած նորանշանակ մշակույթի նախարարին չհուզեց մեղանչումները մեր մշակույթի այս մարգարտի նկատմամբ: Գոնե Թումանյանի դեմ սրբապղծությունը նրան հուզեր: Կարծում էինք, թե հաջորդ օրն իսկ պիտի արտակարգ մի հավաք հրավիրեր՝ ի շահ ոչ միայն «Անուշ»-ի, այլեւ մեր արժանապատվության ու մեր թատրոնի փրկության, նրան կործանման ճանապարհից հետ դարձնելու՝ քանի դեռ բաս ուշ չէ:

Ովքե՞ր են հովանավորում մեր մշակույթը խեղաթյուրող, ազգային օպերան գավառական մակարդակի փորձադաշտի վերածած սիրողական որակի պատեհապաշտներին:

ԱՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դիրիժոր

Կյանքից հեռացավ նշանավոր մի հայորդի



Օրերս Բրյուսելից տխուր լուր ստացա: Վախճանվել է Բելգիայի հայկական համայնքի նահապետ, ճանաչված եգիպտագետ Արբակ Մխիթարյանը: Ողբացյալին ծանոթացա, երբ 1962-ին, ընկերակցությամբ փարիզահայ նշանավոր ճարտարապետ Էդվարդ Ութուջյանի, ժամանել էին Երեւան: Իմ ուղեկցությամբ գնացինք դեպի Ապան, Պտղնի, Բջնի, Սեւանա վանքը, ծանոթացրի հայ ճարտարապետության այդ քարակերտ գոհարներին:

Ծանոթությունն Արբակ Մխիթարյանի հետ ամրապնդվեց եւս մի քանի հանդիպումներով ու տեսական նամակագրությամբ (որոնք պահ են տրված ՀՀ ճարտարապետության թանգարան-ինստիտուտին):

Ստորեւ հատվածաբար ներկայացնում եմ իմ «Արվեստակից ժամանակակիցներս» (Երեւան, 2001, էջ 440–444) գրքում տպագրված իր հակիրճ կենսագրությունը:

Ծնվել է 1911-ի հունվարի 24-ին Եգիպտոսի Թանթահիրե քաղաքում, որտեղ ստացել է իր հայեցի կրթությունը, հիանալի տիրապետել ոչ միայն հայերենին, այլեւ ֆրանսերենին եւ արաբերենին: Բարձրագույն կրթություն ստանալու փափագով մեկնել է Բելգիա: Ուսանել է Լյեժի համալսարանի հնագիտության ֆակուլտետում ու գեղարվեստի բարձրագույն դպրոցում, երկուսն էլ ավարտել է 1932-ին: Ուսման տարիներին բախտ է ունեցել ծանոթանալու, հարմրտանքով ունկնդրելու մեծ հայագետ Նիկողայոս Ադոնցին, դարձել նրա երկրպագուն: Եգիպտագիտության դասախոսությունների է մասնակցել հանրաճանաչ եգիպտագետ Կաղարիի մոտ, արժանանալով նրա գնահատանքին ու հովանավորությանը: Երբ նա վախճանվել է 1942-ին, համաձայն իր կտակի՝ Արբակ Մխիթարյանն ստանձնել է Բրյուսելի Եղիսաբեթ թագուհու անվան եգիպտաբանության ինստիտուտի ընդհանուր քարտուղարի պաշտոնը, նաեւ արաբերեն դասավանդել:

Պրոֆեսոր Արբակ Մխիթարյանը հեղինակ է բազում աշխատությունների ու հիմնարար երկու մենագրության: Դրանցից առաջինը նվիրված է Հին Եգիպտոսի որմնանկարչությանը (Ka Peintur Egiptienne), որը լույս է տեսել երկու անգամ (1954, 1979 թթ.): Նրանում ըստ Եգիպտոսի թագավորությունների չորս շրջանների հաջորդաբար ներկայացված են դամբարանային որմնանկարչության բացառիկ, ուշագրավ նմուշների արվեստաբանական վերլուծությունները:

Մյուս աշխատությունը՝ շարադրված հայ նշանավոր արվեստաբան Սիրարփի Տեր-Ներսիսյանի հեղինակությամբ (առանձին-առանձին ֆրանսերեն եւ անգլերեն), լույս է տեսել 1986-ին Անթիլիասում: «Miniatures arme´niennes d'Ispahan» խորագիրը կրող այս ուշագրավ ու խիստ արժեքավոր մենագրությունը նվիրված է Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքում պահվող մանրանկարչական բազմահարուստ ու բազմաբովանդակ նմուշների պատկերագրական ու արվեստաբանական վերլուծությանը: Գիտնականների համընդհանուր կարծիքով, հեղինակները արժեքավոր ներդրում են կատարել հայ արվեստաբանության մեջ:

Ողբացյալն իր բեղմնավոր գիտադասախոսական գործունեությանը տասնամյակներ շարունակ զուգակցել էր ակտիվ հասարակական գործունեությունը: Նախագահն էր Բելգիայի, մասնավորապես Բրյուսելի հայկական համայնքի: Բրյուսելում իր նախաձեռնությամբ գործում էր «Հայտուն» ակումբը, իսկ այնտեղ՝ երկօրյա դպրոցը:

Արբակ Մխիթարյանին հաճելի առիթներ եմ ունեցել նաեւ հանդիպելու հայ արվեստին նվիրված միջազգային գիտաժողովներում, որոնք տեղի են ունեցել Իտալիայում, Ֆրանսիայում եւ Հայաստանում: Վերջինի (տեղի ունեցած 1987-ին) մասին հիշատակ է մնացել ինձ ուղղված նամակը, որում գրել էր. «Անգամ մը եւս կուգամ հայտնելու թեզի իմ հրճվանքը՝ զքեզ քաջառողջ վիճակի տեսնելու համար: Նաեւ երախտապարտ եմ, որ քու առաջարկիդ շնորհիվ երջանկություն ունեցա նորեն հայրենիքը տեսնելու, հին բարեկամներուս հանդիպելու, եւ կնոջս (ֆրանսուհի) ցուցնելու մեր երկիրը: Ցես կրնար երեւակայել, թե որքան խանդավառված եմք այդ այցելությամբ, ձեր բոլորիդ բարյացակամ հյուրասիրությամբ, հոյակապ մեր հուշարձաններով զորս կարողացավ (նկատի ունի կնոջը-Վ. Հ.) իր աչքով տեսնելու: Մեկ խոսքով՝ ջերմ մթնոլորտում շրջապատեց զմեզ մեր ճամբորդության ընթացքին: Ուրախ պիտի ըլլամ, եթե կրկին հանդիպելու առիթ ունենամք»:

Ցավո՞ք չունեցավ:

ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱՍ ակադեմիկոս

ԳՐՏԱԾՈՂՈՎ

Հայ-իրանական մշակութային նոր կամուրջ

Մեկ տարի առաջ Հայաստանի գրողների միության, Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնի եւ արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության միջեւ բանակցություններ էին ընթանում Հայաստան-Իրան մշակութային կամուրջ ծրագրի իրականացման ուղղությամբ: Եվ ահա երեկ ՀԳՄ-ում մեկնարկեց ծրագիրը, որը կտեւի մինչեւ հունիսի 12-ը: Իրանից ժամանած մտավորականների պատվիրակությունը ղեկավարում է գրող Մեհդի Սանային, պատվիրակության կազմում ընդգրկված են Իրանի մտավորական շրջանակներում հայտնի գործիչներ՝ դոկտորներ Ալի Բուլոմբաշին, Լենա Մելիումյանը, Գյարմառուդին, Քյուռաս Ամիրին, Թաֆմիլ Հոմայանը, Խեյլեդալի Մուսավին:

Գիտաժողովի առաջին նիստը կսկսվի այսօր՝ առավոտյան, ԱՕԿՍ-ում՝ Մեհդի Սանայի ելույթով: Ելույթներ կունենան Ալի Բուլոմբաշին Իրանից, Պարույր Մուրադյանը, Ատոմ Ստեփանյանը՝ Հայաստանից: Նիստերը կշարունակվեն հաջորդաբար՝ Մատենադարանում (հունիսի 9), ՀԳՄ-ում (հունիսի 10, 11), Հր. Աճառյան համալսարանում (հունիսի 10): Նիստերը կեզրափակվեն հունիսի 12-ին՝ ԱՕԿՍ-ում կայացող մամուլի ասուլիսով:

Գիտաշրջանի զեկուցումները, բնականաբար, հայ-իրանական բազմադարյա հարաբերությունների համատեքստում՝ առնչվելու են երկու հարեւան ժողովուրդների մշակութային եւ հոգեւոր ժառանգությունների, պատմությանը, լեզուներին, մասնավորապես անցյալի եւ ներկա գրական ընթացքին: Գիտաժողովի ավարտից հետո զեկուցումներն առանձին գրքով կհրատարակվեն:

Բացման խոսքում ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը ողջունեց մշակութային երկխոսության այս իրողությունը՝ իբրեւ դարերից եկող եւ ճակատագրորեն հայ-իրանական պատմամշակութային ընդհանրությունների վկայություն եւ իբրեւ գիտաժողովի ընթա ներկայացրեց Սիլվա Կապուտիկյանի թարգմանությամբ (տողացին՝ Արմանուշ Կոզմոյանի) «Ընտրանի պարսկական պոեզիայի» նոր հրատարակված ժողովածուն:

ԱՕԿՍ-ի փոխնախագահ Հասմիկ Պողոսյանը կարեւորեց 20-րդ դարավերջյան եւ նոր դարասկզբի մարդկությանը փորձարկող երեւույթի՝ գլոբալիզացիայի մարտահրավերների ընթացքում տարբեր քաղաքակրթությունների նման երկխոսության նշանակությունը:

Հայ ժողովրդի առանձնահատկություններից ամենաբնորոշը. Հայաստանում Իրանի դեսպանատան մշակույթի խորհրդականն ազգային ինքնատիպանության խնդիրը համարեց եւ տեղեկացրեց, որ 10 օրից Իրանում կանցկացվի հայկական մշակույթի շաբաթ:

ՀՀ մշակույթի նախարար Հովիկ Հովեյանը հայ-իրանական գրական բազմադարյա առնչությունների, լեզվի, պատմության, հոգեբանության վիթխարի փորձի բնականոն շարունակություն դիտեց այս նոր կամրջումը՝ ի նշան գրականությունների հարստացման եւ մշակույթի նկատմամբ հարգանքի:

Հայաստանում Իրանի դեսպան Մոհամմադ Ֆարհադ Քուլեյնին ողջունելով հավաքի մասնակիցներին, նկատեց, որ ինքն այս 12 տարիների ընթացքում փորձել է ճանաչել Հայաստանը եւ հայագիտության ասպարեզում որոշակի քայլեր է արել:

Գիտաժողովի բացման արարողությունն ավարտվեց գեղարվեստական հայտագրով:

Մ. Ռ.

Euro04 PORTUGAL 2004

Հունիսի 12-ին պորտուգալական Պորտո քաղաքի «Դրագաու» մարզադաշտում Պորտուգալիայի եւ Հունաստանի հավաքականների մրցախաղով կմեկնարկի ֆուտբոլի Եվրոպայի 12-րդ առաջնությունը: Ընտրական մրցաշարի բովով անցած 15 ուժեղագույն հավաքականներն ու Եվրոպայի չեմպիոն Ֆրանսիայի ընտրանին մրցավեճի կբռնվեն Շվեյցարիայի ընտրանիները: «C» խմբում մրցավեճի կբռնվեն Իտալիայի, Շվեդիայի, Դանիայի եւ Բուլղարիայի ֆուտբոլիստները, իսկ «D» խմբից պայքարի մեջ կմտնեն Հոլանդիայի, Չեխիայի, Գերմանիայի եւ Լատվիայի հավաքականները: Խմբերում առաջին երկու տեղերը զբաղեցրած հավաքականները պայքարը կշարունակեն եզրափակիչում:

Ընթերցողներին ենք ներկայացնում Եվրոպայի 12-րդ առաջնության խաղացանկը (խաղի սկիզբը նշված է Երեւանի ժամանակով):

18 հունիսի	
Բուլղարիա-Դանիա	21:00
Իտալիա-Շվեդիա	23:45
19 հունիսի	
Լատվիա-Գերմանիա	21:00
Հոլանդիա-Չեխիա	23:45
20 հունիսի	
Իսպանիա-Պորտուգալիա	23:45
Ռուսաստան-Հունաստան	23:45
21 հունիսի	
Խորվաթիա-Անգլիա	23:45
Շվեյցարիա-Ֆրանսիա	23:45
22 հունիսի	
Իտալիա-Բուլղարիա	23:45
Դանիա-Շվեդիա	23:45

Եվրոպական ֆուտբոլի մեծ ստուգատես Պորտուգալիայում

մայրցամաքի ուժեղագույն թիմին որոշելու համար: Անկասկած, ֆուտբոլասերներին բավական հետաքրքրական ու թեժ մրցախաղեր են սպասում: 23 օրվա ընթացքում նրանք ականատես կլինեն եվրոպական ուժեղագույն հավաքականների մրցավեճին, որոնց եզրափակիչ ակորդը կհնչի հուլիսի 4-ին Լիսաբոնի «Դա լուզ» մարզադաշտում: Այդ օրը հայտնի կդառնա Եվրոպայի նոր չեմպիոնը:

Մրցակարգի համաձայն 16 հավաքականները նախնական փուլում բաժանվել են չորս խմբի: «A» խմբում ընդգրկվել են Պորտուգալիայի, Հունաստանի, Իսպանիայի եւ Ռուսաստանի հավաքականները: «B» խումբը կազմել են Ֆրանսիայի, Անգլիայի, Խորվաթիայի եւ Շվեյցարիայի հավաքականները: «C» խմբում մրցավեճի կբռնվեն Իտալիայի, Շվեդիայի, Դանիայի եւ Բուլղարիայի ֆուտբոլիստները, իսկ «D» խմբից պայքարի մեջ կմտնեն Հոլանդիայի, Չեխիայի, Գերմանիայի եւ Լատվիայի հավաքականները: Խմբերում առաջին երկու տեղերը զբաղեցրած հավաքականները պայքարը կշարունակեն եզրափակիչում:

Ընթերցողներին ենք ներկայացնում Եվրոպայի 12-րդ առաջնության խաղացանկը (խաղի սկիզբը նշված է Երեւանի ժամանակով):

Խաղացանկ

12 հունիսի	
Պորտուգալիա-Հունաստան	21:00
Իսպանիա-Ռուսաստան	23:45
13 հունիսի	
Շվեյցարիա-Խորվաթիա	21:00
Ֆրանսիա-Անգլիա	23:45
14 հունիսի	
Դանիա-Իտալիա	21:00
Շվեդիա-Բուլղարիա	23:45
15 հունիսի	
Գերմանիա-Հոլանդիա	23:45
Չեխիա-Լատվիա	21:00
16 հունիսի	
Հունաստան-Իսպանիա	21:00
Ռուսաստան-Պորտուգալիա	23:45
17 հունիսի	
Անգլիա-Շվեյցարիա	21:00
Խորվաթիա-Ֆրանսիա	23:45
23 հունիսի	
Հոլանդիա-Լատվիա	23:45
Գերմանիա-Չեխիա	23:45
1/4 եզրափակիչ	
24 հունիսի	
A1-B2 (A)	23:45
25 հունիսի	
B1-A2 (B)	23:45
26 հունիսի	
C1-D2 (C)	23:45
27 հունիսի	
D1-C2 (D)	23:45
Կիսաեզրափակիչ	
30 հունիսի	
A-C	23:45
1 հուլիսի	
B-D	23:45
4 հուլիսի	
Եզրափակիչ	23:45

Ներկայացնում ենք Եվրոպայի առաջնության մասնակիցներին

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության շեմին ընթերցողներին ենք ներկայացնում 16 ազգային հավաքականների կազմերը: Այսօր կներկայացնենք «A» խմբում ընդգրկված հավաքականների կազմերը՝ ֆուտբոլիստների համարներով:

Պորտուգալիա

Դարպասապահներ՝ 22. Ժոզե Մորեյրա («Բենֆիկա»), 1. Ռիկարդու Սոարիշ («Սպորտինգ»), 12. Կիմ Սիլվա («Բրագա»):

Պաշտպաններ՝ 13. Միգել Մոնտեյրու («Բենֆիկա»), 3. Ռուի Ժորժի («Սպորտինգ»), 15. Բեսու Սեւերու («Սպորտինգ»), 4. Ժորժի Անդրադի («Դեպորտիվո»), 5. Ֆեռնանդու Կոուտու («Լացիո»), 16. Ռիկարդու Կարվալյու («Պորտո»), 2. Պաուլու Ֆերեյրա («Պորտո»), 14. Նունու Վալենսի («Պորտո»):

Կիսապաշտպաններ՝ 18. Մանիշե Ռիբեյրու («Պորտո»), 19. Տյագու Մենդիշ («Բենֆիկա»), 8. Արմանդու Գոնսալվիշ Պեսիս («Բենֆիկա»), 7. Լուիշ Ֆիգու («Ռեալ»), 20. Դեկու («Պորտո»), 6. Կոշտինյա («Պորտո»), 10. Ռուի Կոշտա («Միլան»):

Հարձակվողներ՝ 17. Կրիշտիանու Ռոնալդու («Մանչեսթր յունայթեդ»), 11. Սիմոն Սաբրոզա («Բենֆիկա»), 23. Էլդեր Պոշտիգա («Տոտենհեմ»), 21. Նունու Գոմիշ («Բենֆիկա»), 9. Պեդրու Պաուլետա (ՊՍԺ):

Գլխավոր մարզիչ՝ Լուիշ Ֆելիպե Սկոլարի:

Իսպանիա

Դարպասապահներ՝ 13. Դանիել Առանսուբիա («Ատլետիկո»), 1. Սանտյագո Կանիսարես («Վալենսիա»), 23. Իկեր Կասիլյաս («Ռեալ»):

Պաշտպաններ՝ 15. Ռաուլ Բրավո («Ռեալ»), 22. Խուանիտո («Բետիս»), 18. Սեսար Մարտին («Դեպորտիվո»), 2.Խոան Կապդեվիլա («Դեպորտիվո»), 12. Գաբրի Գարսիա («Բարսելոնա»), 3. Կառլոս Մարչենա («Վալենսիա»), 5. Կառլես Պույոլ («Բարսելոնա»), 6. Իվան Հելգիերա («Ռեալ»):

Կիսապաշտպաններ՝ 20. Խավի Էոնանդես («Բարսելոնա»), 19. Խոակին Սանչես («Բետիս»), 8. Ռուբեն Բարախա («Վալենսիա»), 21. Խուան Կառլոս Վալերոն («Դեպորտիվո»), 4. Դավիթ Ալբելդա («Վալենսիա»), 16. Խավի Ալոնսո («Ռեալ սոսյեդադ»), 14. Վիսենտե Ռոդրիգես («Վալենսիա»):

Հարձակվողներ՝ 10. Ֆեռնանդո Մորյենտես («Մոնակո»), 9. Ֆեռնանդո Տորես («Ատլետիկո»), 17. Խոսեբ Էչեվերիա («Ատլետիկո»), 11. Ալբերտ Լուկե («Դեպորտիվո»), 7. Ռաուլ Գոնսալես («Ռեալ»):

Գլխավոր մարզիչ՝ Ինյակի Սաես:

Հունաստան

Դարպասապահներ՝ 1. Անտոնիոս Նիկոպոլիդիս («Պանաթինաիկոս»), 12. Կոստաս Չալկիաս («Պանաթինաիկոս»), 13. Ֆանիս Կաստրյանակիս («Օլիմպիակոս»):

Պաշտպաններ՝ 5. Տրայանոս Դելաս («Ռոմա»), 18. Յանիս Գումաս («Պանաթինաիկոս»), 2. Յուկաս Սեյտարիդիս («Պանաթինաիկոս»), 14. Տակիս Ֆիսաս («Բենֆիկա»), 4. Նիկոս Դաբիզաս («Լեսթեր»), 3. Սթելիոս Վենետիդիս («Օլիմպիակոս»), 19. Միխալիս Կապսիս (ԱԵԿ):

Կիսապաշտպաններ՝ 22. Կոստաս Կաթսուրանիս (ԱԵԿ), 7. Թեոդորոս Զագորակիս (ԱԵԿ), 23. Վասիլիս Լակիս (ԱԵԿ), 10. Վասիլիս Ցարսաս (ԱԵԿ), 6. Անգելոս Բասինաս («Պանաթինաիկոս»), 16. Պանտելիս Կաֆես («Օլիմպիակոս»), 17. Գեորգիոս Գեորգիադիս («Օլիմպիակոս»), 8. Սթելիոս Յանակոպուլոս («Բոլոնա»), 20. Գեորգիոս Կարագունիս («Ինտեր»):

Հարձակվողներ՝ 21. Դիմիտրիոս Պապադոպուլոս («Պանաթինաիկոս»), 15. Ցիսիս Վրիզաս («Ֆիորենտինա»), 9. Անգելոս Խարիստեաս («Վերդեր»), 11. Դեմիս Նիկոլաիդիս («Ատլետիկո»):

Գլխավոր մարզիչ՝ Օտտո Ռեհագել:

Ռուսաստան

Դարպասապահներ՝ 1. Սերգեյ Օվչինինիկով («Լոկոմոտիվ»), 12. Վյաչեսլավ Մալաֆեեւ («Զենիթ»), 23. Իգոր Ակինֆեեւ (ԲԿՄՍ):

Պաշտպաններ՝ 21. Ալեքսեյ Բուգաեւ («Տորպեդո»), 14. Ալեքսանդր Անյուկով («Կոռիլյա սովետով»), 13. Ռոման Շառոնով («Ռուբին»), 16. Վադիմ Եվսեեւ («Լոկոմոտիվ»), 17. Դմիտրի Սենինկով («Լոկոմոտիվ»):

Կիսապաշտպաններ՝ 6. Իգոր Սեմշով («Տորպեդո»), 19. Վլադիմիր Բիստրով («Զենիթ»), 15. Դմիտրի Ալենիչեւ («Պորտո»), 4. Ալեքսեյ Սմերտին («Պորտսմուտ»), 2. Վլադիսլավ Ռադիմով («Զենիթ»), 10. Ալեքսանդր Մոստովոյ («Սելթա»), 20. Դմիտրի Լոսկով («Լոկոմոտիվ»), 5. Անդրեյ Կարյակա («Կոռիլյա սովետով»), 7. Մարատ Իզմայլով («Լոկոմոտիվ»), 8. Ռոման Գուսեւ (ԲԿՄՍ), 22. Եվգենի Ալդոնին (ԲԿՄՍ):

Հարձակվողներ՝ 18. Դմիտրի Կիրիչենկո (ԲԿՄՍ), 9. Դմիտրի Բուլիկին («Դինամո» Մ.), 3. Դմիտրի Սիչով («Լոկոմոտիվ»), 11. Ալեքսանդր Կերժակով («Զենիթ»):

Գլխավոր մարզիչ՝ Գեորգի Յարցեւ:

Միջոցառումներ նվիրված Տիգրան Պետրոսյանին

Այս տարվա հունիսի 17-ին լրանում է հայ հանճարեղ շախմատիստ, աշխարհի 9-րդ չեմպիոն Տիգրան Պետրոսյանի ծննդյան 75-ամյակը: Հայաստանի շախմատի ֆեդերացիայի առաջարկությամբ ՖԻԴԵ-ն 2004 թ. պատմաշրջանում հռչակել է Տիգրան Պետրոսյանի տարի: Ինչպես տեղեկացանք Հայաստանի շախմատի ֆեդերացիայի գլխավոր քարտուղար Գագիկ Հովհաննիսյանից, ՀՀ կառավարության որոշմամբ Պետրոսյանի հոբելյանը մեր երկրում նշվում է պետական մակարդակով: Ստեղծվել է կառավարական հոբելյանական հանձնաժողով ՀՀ պատմությունների նախարար, շախմատի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Մերժ Սարգսյանի գլխավորությամբ: Հոբելյանական հանձնաժողովը մշակել եւ իրականացնում էր միջոցառումների լայն ծրագիր: Արդեն անցկացվել են չեմպիոնի հոբելյանին նվիրված մի ամբողջ շարք խոշոր միջոցառումներ: Երեւանում տարեսկզբին կազմակերպվել է Հայաստանի ուժեղագույն պատանի շախմատիստների հոբելյանական մրցաշար: Ստեփանակերտում ընթացավ Պետրոսյանի միջազգային խոշոր հուշամրցաշար, որը մեծ արձագանք գտավ ամբողջ աշխարհում:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, հունիսի 9-15-ը Մոսկվայում կկազմակերպվի տարվա ամենաուշագրավ մարզական իրադարձություններից մեկը. «Պետրոսյանական» թիմը կմրցի աշխարհի հավաքականի հետ: Պետրոսյանականների կազմը կգլխավորի աշխարհի ուժեղագույն շախմատիստ Գարի Կասպարովը: Թիմում ընդգրկվել են նաեւ Վլադիմիր Հակոբյանը, Ռաֆայել Վահանյանը, Սմբատ Լպուտյանը, Պետեր Լեկոն, Բորիս Գելֆանդը: Աշխարհի հավաքականի կազմում հանդես կգան Վիշվանաթան Անանդը, Պյոտր Սվիդլերը, Մարիլ Ադամսը, Էթյեն Բաֆոն, Ֆրանսիսկո Վալեխոն եւ Լյուկ վան Վելին:

Նոյեմբերին Տիգրան Պետրոսյանին նվիրված 2 խոշոր մրցաշար կանցկացվի Երեւանում: Նախ կընթանա միջազգային բաց մրցաշար, ապա կանցկացվի Եվրոպայի առաջ շախմատի առաջնությունը: Դեկտեմբերին նախատեսվում է ինտերնետի միջոցով Պետրոսյանի միջազգային հուշամրցաշար անցկացնել Հայաստանի, Ռուսաստանի, Չինաստանի եւ Հնդկաստանի հավաքականների մասնակցությամբ: Այս տարի Տիգրան Պետրոսյանի անունով է կոչվել Ապարանի կենտրոնական հրապարակը: Նախատեսվում է մինչեւ տարեվերջ այստեղ տեղադրել Պետրոսյանի հուշարձանը: Աշխարհի 9-րդ չեմպիոնի եւս մեկ հուշարձան կհառնի Երեւանի Դավիթաշեն թաղամասում: Ակադեմիկոս Գեորգ Բուսյանը լույս է ընծայել «Տիգրան Պետրոսյանն իմ հուշաշխարհում» գիրքը: Հայերենով եւ անգլերենով լույս է տեսել Գագիկ Հովհաննիսյանի «Տիգրան Պետրոսյանը լուսանկարներում, գրքերում, ասույթներում» գիրքը: Հայաստանի ազգային գրադարանը պատրաստել է Տիգրան Պետրոսյանին նվիրված հատարակությունների ցուցահանդես: Շուտով կթողարկվի նամականիշ՝ նվիրված Տիգրան Պետրոսյանի հոբելյանին: Հունիսին Մոսկվայում, իսկ նոյեմբերին՝ Երեւանում կկայանան հանդիսավոր նիստեր նվիրված հանճարեղ շախմատիստին:

Հայ ականավոր շախմատիստին նվիրված բազմաթիվ միջոցառումներ կանցկացվեն հանրապետության տարբեր բնակավայրերում, ինչպես նաեւ սփյուռքում եւ արտասահմանյան շախմատային մի շարք կենտրոններում:

Անհաջողության դեմքում Սկոլարին կհեռանա

Պորտուգալիայի հավաքականի գլխավոր մարզիչ Լուիս Ֆելիպե Սկոլարին հայտարարել է, որ կհեռանա հավաքականից, եթե իր սաներին չհաջողվի հաղթահարել խմբային մրցաշարի արգելքը: «Եթե մեզ չհաջողվի քառորդ եզրափակիչ դուրս գալ, նշանակում է վատ եմ կատարել իմ աշխատանքը: Չէ՞ որ իմ առջեւ խնդիր է դրված նվաճագույնը տեղ զբաղեցնել լավագույն քառյակում: Չեմ կարծում, որ կմնամ հավաքականում անհաջողության դեմքում», նշել է պորտուգալացիների մարզիչը:

Սկոլարիի պայմանագրի ժամկետը ֆուտբոլի ֆեդերացիայի հետ լրանում է հուլիսի վերջին, սակայն բրազիլացի մասնագետն արդեն ցանկություն է հայտնել իր գործունեությունը շարունակել Պորտուգալիայում: Սակայն եթե նրա պայմանագրի ժամկետը չերկարաձգվի, ապա ստիպված կլինի վերադառնալ Բրազիլիա, որտեղ շատ ակումբներ կցանկանային նրան վստահել թիմի ղեկը:

Նեդվեդը լավագույնն է նաեւ Չեխիայում

2003 թ. Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ Պավել Նեդվեդը լավագույնն է ճանաչվել նաեւ Չեխիայում: Մարզական լրագրողների անցկացրած հարցումներով Չեխիայի հավաքականի եւ Թուրինի «Յուվենտուսի» կիսապաշտպանը բոլորից շատ միավորներ է վաստակել: 2-րդ եւ 3-րդ տեղերը զբաղեցրել են Մարեկ Յանկուլովսկին իտալական «Ուդինեզեից» եւ Կարել Պոբորսկին Պրահայի «Սպարտայից»: Լավագույն ֆուտբոլիստի համար սահմանված «Ոսկե գնդակ» մրցանակը Պավել Նեդվեդին է հանձնել Չեխիայի նախագահ Վացլավ Կլաուսը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Հաշվարկային հաշվեկշիռ 01 հունվար 2004 թ.

Ձեւ N 1

Կազմակերպության անվանումը «Արգելյ» ՍՊԸ
Փաստացի գործունեության խարդային սեղմումները
Ինքնակալ երկու տեսակները խարդային ապրանքներ
Պետական գրանցման համարը 286.110.04978
Հարկ վճարողի հաշառման համարը 18-02567617
Տնտեսի միավորը հազ. դրամ
Գտնվելու վայրը ք. Երեւան, Ռուսինյան 21
Փաստացի գործունեության իրականացման վայրը Կոտայքի մարզ, գ. Աբովյան

Ակտիվ	տող	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի վերջին)
I. Ոչ ընթացիկ ակտիվներ		
Ոչ նյութական ակտիվներ	030	12500
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	12500
II. Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	140	326
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	121
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	10
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	50
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	507
Հաշվեկշիռ	230	13007
Պասիվ		
III. Սեփական կապիտալ		
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար	240	50
Կուտակված շահույթ	270	(23362)
Ընդամենը սեփական կապիտալ	300	(23312)
V. Ընթացիկ պարտավորություններ		
Կարճաժամկետ փոխառություններ	380	25000
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	1448
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	16
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր աշխատակազմի սոցիալական ապահովագրության գծով	420	180
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	430	522
Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	480	9153
Հաշվարկներ առհասարակ անձանց հետ	481	9153
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	36319
Հաշվեկշիռ	500	13007

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն Տարեկան

Ձեւ N 2

Տուգանքի անվանումը	տող	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	87882
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	(101854)
Վարչական ծախսեր	050	(9390)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	(23362)
Գործառնական շահույթ (վնաս)	090	(23362)
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	(23362)
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	(23362)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	(23362)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն Տարեկան

Ձեւ N 3

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	1. Նախորդ տարի (ժամանակաշրջան)				
		Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ			
Հոդվածները	տող	Կանոնադր. կապիտալ	Զուտ գումար	Կուտակված շահույթ (վնաս)	Ընդամենը
Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	050	50	50		50
Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ (վնաս)	060			(23362)	(23362)
Մնացորդը առ 01.01.04 թ.	100	50	50	(23362)	(23312)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Ձեւ N 4

Տուգանքի անվանումը	Հաշվետու ժամանակաշրջան տող	Գումար	այդ թվում դրամ	դրամ
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	87882	87882	
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների եկամուտ				
Նյութերի, ապրանքների ձեռքբերման գծով	030	966	966	
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	060	8184	8184	
Վճարումներ աշխատակիցներին եւ նրանց անունից	070	2947	2947	
Վճարումներ բյուջե	080	75745	20638	55107
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	090	1099	201	898
Ընդամենը գործառնական գործունեությունից եկամուտ	110	88941	32936	56005
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	120	(1059)	(54946)	(56005)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր				
Ֆինանսական ակտիվներով գործառնություններին	140	50		50
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	170	50		50
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների եկամուտ				
Ոչ ընթացիկ նյութական եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով	180	25000	25000	
Ընդամենը ներդրումային գործունեությունից եկամուտ	210	25000	25000	
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	220	(24950)	(25000)	50
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր				
Ստացված վարկերից եւ փոխառություններից	240	26059	26059	
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	260	26059	26059	
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների եկամուտ				
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	310	26059	26059	
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	320			55955
Ներքին շարժեր	330		(56005)	56005
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	350	50		50

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ Տարեկան

Ձեւ N 5

Այուսակ 7

Ոչ նյութական ակտիվներ

Դասի անվանումը	տող	Ավելացում ընդամենը	Նվազեցում ընդամենը	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը
Լիցենզիաներ եւ վստահագրեր (ֆրանշիզներ)				
- հաշվեկշռային արժեք	040	25000	12500	12500
- արժեք	041	25000		25000
- կուտակված ամորտիզացիա	042	12500		12500
Ընդամենը				
- հաշվեկշռային արժեք	100	25000	12500	12500
- արժեք	101	25000		25000
-կուտակված ամորտիզացիա	102	12500		12500

Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին Այուսակ 14

Հարկատեսակի անվանումը	տող	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը
Հաստատագրված վճարներ	080	17
Ընդամենը		17

Հաշվեկշիռ հոդվածների մասին (փոխհատուցման) ժամկետների դասակարգմամբ Այուսակ 16

	տող	
Ոչ նյութական ակտիվներ	020	12500
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	050	12500
II. Ընթացիկ ակտիվներ		
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	110	507
պաշարներ	111	326
դրամական միջոցներ	112	50
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	120	507
Ընդամենը ակտիվներ	130	13007
Պասիվ		
III. Սեփական կապիտալ		
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	140	50
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում	150	(23362)
Ընդամենը սեփական կապիտալ	160	(23312)
V. Ընթացիկ պարտավորություններ		
Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում	200	36319
Կարճաժամկետ փոխառություններ	201	25000
Առեւտրային կրեդիտորական պարտքեր	202	1448
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	210	36319
Ընդամենը պասիվներ	220	13007

5.3.4. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը կից ծանոթագրություններ Այուսակ 18

Ֆինանսական արդյունքների հաշվետվություն ծախսերի ըստ բնույթի դասակարգմամբ

Տուգանքի անվանումը	տող	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	87882
Օգտագործված հումք եւ նյութեր	050	(639)
Անձնակազմի գծով ծախսումներ	060	(4869)
Մաշվածության եւ ամորտիզացիայի գծով ծախսումներ	070	(12500)
Գործառնական այլ ծախսումներ եւ ծախսեր	080	93236
Գործառնական շահույթ (վնաս)	090	(23362)
Սովորական գործունեությունից շահույթ	110	(23362)
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	130	(23362)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	150	(23362)

Ղեկավար՝ ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
Գլխավոր հաշվապահ՝ ՅԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

Ամերիկյան դեսպանատունը հրավիրում է աճուրդային գնումների

Աճուրդի են հանվում ամերիկյան կահույք, էլեկտրական սարքավորումներ, մեքենաներ, գեներատորներ (միաֆազ եւ եռաֆազ): Աճուրդը կկայանա 2004 թ. հունիսի 20-ին, ժամը 10:00-16:00, դեսպանատան պահեստում, որը գտնվում է Ջարբախ, Արարատյան 90 հասցեում (մուտքը Շահուրի փողոցից, որը հայտնի է նաեւ որպես Շահվերդյան փողոց):

Աճուրդի հանվող ապրանքները զննելու համար կարող եք այցելել պահեստ շաբաթ օրը՝ հունիսի 19-ին, ժամը 10:00-16:00: Լոտերը վաճառվելու են այնպես, ինչպես որ կան **(ԱՄՆ դեսպանատունը վաճառքի հանված ապրանքների որակի վերաբերյալ երաշխիքներ չի ապահովում):** Կվաճառվեն զովացուցիչ ըմպելիքներ:

Այն ֆիզիկական անձինք, ովքեր մախսային վճարումներից զերծ գնումներ կատարելու իրավունք չունեն, պարտավոր են ապրանքը գնելուց հետո ՀՀ համապատասխան մարմինների հետ կարգավորել հարկային եւ մախսային վճարումների հարցերը:

Ուշադրություն. կիրառվելու է աճուրդային վաճառքի նոր ձեւ, որը թույլ կտա գնել միայն մի բան. եթե ուզում եք գնել մեկ աթոռ, **դուք կարող եք գնել միայն մեկ աթոռ:** Եթե ուզում եք գնել մեկ սառնարան, **գնեք մեկ սառնարան:** Սա վաճառք է անհատ սպառողի համար:

Լրացուցիչ մանրամասների համար կարող եք զանգահարել ԱՄՆ դեսպանատուն, Ռոբերտ Քրուքին, Սվետլանա Հարթին կամ Արտաշես Ցոմոյանին՝ **527001, 524840 եւ 524872** հեռախոսահամարներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2004 թվականի հունիս-հուլիս ամիսներին «Վասպուրական» հայրենակցական միությունը կազմակերպելու է 10-օրյա ուխտագնացություն Արեւմտյան Հայաստան հետեւյալ երթուղով՝

Կարս-Անի-Էրզրում-Սարիղամիշ-Մուշ-Բիթլիս-Վան-Բայազետ-Իգդիր

Վանում գտնվելու 4 օրերի ընթացքում կկազմակերպվի այցելություն Աղթամար եւ Կռուց կղզիներ, ինչպես նաեւ՝ Արտամետ, Վանի բերդ, Վանի թանգարան եւ Վարագավանք:

10-օրյա ուխտագնացությունը կիրականացվի եվրոպական չափանիշներին համապատասխանող ավտոբուսով: Ուղեւորության արժեքի մեջ ներառված են հյուրանոցի, սննդի եւ տեխնիկական այլ հարցերի հետ կապված ծախսերը:

Դիմել մինչեւ 2004-ի հունիսի 15-ը:

Մանրամասնությունների համար ամեն ուրբաթ, ժամը 13.00–14.00 դիմել «Վասպուրական» հայրենակցական միություն:

Հասցեն՝ Հանրապետության (նախկինում՝ Ալավերդյան) փողոց թիվ 32 (Հուշարձանների պահպանության ընկերության շենքում):

Հեռախոս՝ 52-95-83:

«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

Նվիրված դոկտոր, պրոֆեսոր, քաղաքական-հասարակական գործիչ Կարլեն Դալլաքյանի ծննդյան 75-ամյակին

Տեղի կունենա հունիսի 10-ին, ժամը 17:00-ին, Թեքեյան կենտրոնի հանդիսասրահում:

Բացման խոսք՝
ՀԹՄՄ նախագահ **Ռուբեն Միրզախանյան**
Բանախոսներ՝
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն
Աշոտ Մելքոնյան
«Ազգ» օրաթերթի խմբագիր **Հակոբ Ավետիքյան**

Մուտքն ազատ է

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ

«Հ. եւ Գ. ՀԷԿ» ՍՊԸ-ը դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ Սյունիքի մարզում Որոտան գետի աջ ափին փոքր ՀԷԿ-ի կառուցման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:

ՍՊԸ-ի հասցեն՝ Սյունիքի մարզ, գ. Որոտան, հեռախոս՝ (0830) +3468:

Գովազդի համար զանգահարել՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա: Գրանցման թիւ 65, դասիչ 69150: Տպաքանակը 3000: Ստորագրված է տպագրության 8.06.2004 Գինը 100 դրամ: